

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՒԹԱՐԱՑ ՔԱՂԱԿԱՑՏ

ՍԿԵՏՈՒԱՑՏՈՑ

ՅԱՅԱԳՈՅ ՀԱՄԱՊԱՏՈՒԹՅԱՆ

ԵՐԿՈՉԱԾԱՆ ԸՆԴԳԵԼՈՑ

ՏՐՊ ԵՐՐՈՐԴ



ՅԵՐՈՐԴՈՒՄ

Ե ՏՊԱՐԱՆ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎՅԵԱՆՑ

1865

Арх. № 0.18.19  
документы о продаже  
20480 в фунтах  
и 3000 в рублях  
20278 в 100000



Арх. № 0.18.19  
документы о продаже  
20278 в 100000

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ի Ք

ՄԻՒԹԵՐԵՑ ՔԵՆԵՐԵՑ

ՍԿԵԴՈՒԱՑԻՈՑ

200-300-200-200-200

100-300-100-300-300-100

0-0-100-200-100-0

Պ Ա Տ Ա Ս Ա Խ Ա Ն Ի Ք  
Մ Ե Խ Թ Ա Բ Ա Յ Ե Յ Ե Յ Ե Յ  
Ս Կ Ե Տ Ո Ա Ց Ւ Ո Յ  
Ց Ա Խ Ա Գ Ա Վ Ա Տ Ո Յ Ե Ա Յ  
Ե Ր Կ Ո Տ Ա Խ Ա Ն Ա Ռ Ա Բ Ե Լ Ո Յ

Տ ՀԱՅՈՒԹԵՍՈՒԹԵԱՆ  
Ա . ԷԴՄԻԼԻԱՆԻ S . S . ՄԱՆՏՈՎԱՆՈՒ Վ. ՀԱՅՈՒԹԵԱՆ  
ԿԱԹՈՒՂԵՏԻՈՒ ԱՐԵՆԱՑՆ ՀԵ. ՏՈՅ  
ՆԵ Տ ՊԱՏՐԻՄՔՈՒԹԵԱՆ ՄԵԲՈՅ ԱԹԱՊՈՅ  
ԵՐՈՒ ԱՐԱԿԵՐՏ  
Տ . Տ . ԵՍԱԽԵԱԾ ՆՈՐԵՊՈՅԱԿ ՄԵԲԱԶԵԿ  
ԱՐ Գ Ե ԳԻՍ ԿՈ ԳՈՈՒՏ  
ՆԵ Տ ՊԱՏՐԻՄՔՈՒԹԵԱՆ ԿՈԽՏԱՆԴԻՆՈՒ ՊՈԼԱՅ  
Տ . Տ . ՊՈՂՈՍԻ ՄԵԲԱԶԵԿ ԱՐ Գ Ե ԳԻՍ ԿՈ ԳՈՈՒՏ

ՏՐՊ ԵՐԵՍՆԵՐ



360010010

Ե ՏՊԱՐԵՎՆԻ ՍՐԲՈՅ ՅԵԿՈՎ.ԲԵԼՅԱՑ

1865



## Ա. Պ. Դ

Օ Ա. Ա. Ա. Հ. Տ Կ. Ը մատեան Համբարձում թիւն  
Երկուաման Առաքելոց : որ առ յահայօս թիւն խու-  
շարկու և հետաքննին բանափրաց Ազգին երկիցս մա-  
տուցաւ . ի ըստ ի սուրբ Ամեառոց երրորդ անգամ ըն-  
ծայեմք ի տիսդ հանգերձ յաւելուածով ինչ ինչ զիւց .  
որք յառաջին տպագրութիւնն ի բաց թողեալք էին  
իրու արտաքոյ լինել նոցա խնդրոց կարծեցեալ զիւց .  
որութիւն որբոյն Պետրոսի : Իսկ մեք զորդին յաւե-  
լումք և զնոսին վասն երկուց . նախ առ ի բովանդակել  
ի մի զցրուոր երկու աշխատանոց բարենախանձ հեղի-  
նակին : որոյ մէն մի երկասիրութիւնն հազարա արժէ ո-  
ւոց . ի խնդիրո կը անի և Սկեղեցոց Հայաստանն այց  
շաղեալ կաշցեն բնուա երրեք : Երկրորդ . զի ի յաւել-  
ուածու անդ խօսի հեղինակու և զորդոց խնդրոց վերարե-  
րելոց յառաջնութիւնն և նախապատռաթիւնն Ամե-  
ռոց . որով ցուցանէ : Էլլէ կամոզիկրասնք Հայոց ըստ  
կարգի իշխանութիւնն նախամեծարք ևն քան զՊատրիար-  
քունու Յաւելոց . որք զուով մասնաւոր իրիք բազարի և

ողիսկազմու : ոչ համեսրին ընդ համբաւին գլուխ ազգի միոց  
է կեզեցւոյ : որպիսի է Կամեովիկուն Հայոց : Ի կարգ ան-  
կեալ բանիցն իւրաց՝ խօսս զնէ և ընդում թքանահան  
կարծեաց Յունաց : որբ չորս ամժառ և եթ ընդունելով  
նախամթառու : այն է զաւետարանշացն : և ՚ի նոսին ըդ-  
կրատանց նեռու պրոզին վասն կայսերանինան լինելու ՚ի պա-  
տուի ունելով քան զիշրուազէ մայն : ցուցանեւ հեզ զինու-  
կըն : Եթէ վերջինու այս նախամթառի : և քան զամենայն  
առաքելական Սմբառն յարագու որ ՚ի նմա կատարելոց  
անօրինական խորհրդացն : և զի անդ հասաւառեցու  
իշխանութիւն Եկեղեցւոյն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի  
Նշանարիս Գլուխու :

Ասու առանձինն ևս զիրատանց նեռու պրուէ խօսե-  
լով ցուցանեւ Եթէ ոչ է այն Սմբառ առաքելական : զո-  
րով յետոյ քան զիշրուազութիւն Եկեղեցւոյն շինէալ :  
այդ յափշտակութիւնն է իրաւանց Սմբառացն Եփեսոփ :  
զոր նուստացուցեալ : Ընդ նորս իշխանութեամբն ար-  
կեալ Են հակառակ առաքելական բանին : ընդ նուստիւն  
կարգ Ելով զլաւն : Եւ հասաւառակ ալ ՚ի բանից Եւետու-  
րանին : Եթէ ոչ բաս կարծեացն Յունաց չորեկին ու-  
թուռքն և Եթ՝ Սահմարանշացն կոչեցեալ : այն է Երա-  
սազէ մին : Անունուցն : կրատանց նեռու պրոզին (Եփեսոփ) :  
և Եղեցրանեղբիոյ : Են զիմասորբ : այդ բաս Փրկչին ուուր-  
զեւեցոյ Երկառասանիցն հասաւառ իշխանութիւնն ՚ի վերաց  
Եկեղեցւոյ իւրաց : զիմասորբ և համապատիք Են յեւ-  
կառասան Սաաքելոցն հասաւառակ Եկեղեցիք ՚ի ոփիւռ և  
աշխարհի ՚ի մասին իրաւառութեան : և ՚ի նուստ նախա-  
մանար : Սմբառն Երասազէ մի ՚ի պատիք անօրինական  
խորհրդացն կատարելոց ՚ի նմին : որպէս առաջար:

= ♀. =

ԱՐԴ : զի և այս խնդիրը ու դպրվելու ի կարծեցաց  
առելի համարի ՚ի տեղեկութիւնն ։ վասն որոց յաւելեալ  
առանձնական յերբորդում տարագրութեանն՝ մնամբ բանասիրուց  
Ազգին և ճշմարիտ նախանձուուցաց սուրբ և կաթողիկէ  
Եկեղեցւոյն ։ առ առ ելուգ ոյն ջանեն ։ և նախանձու բերել  
յըմի՛ ըստու մե սարբն ։





# ՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՒԹ-Ը ՔԱՀԱՆԱՑԻ ՍԿԵՒԹԱՑԻՑ

Յաղագո համապատառութեան երկուասանից Առաջելց .  
Ընդումը այնոցիկ՝ որք նուազ առեն զՄհասանան ըստ  
իշխանութեան քան զՊէտրոս . և զՊատրիարքն մեծ զոլ  
առեն քան զԼավմազ զիկոս :

Ի հրամանէ թագաւորին Հայոց Հեթայք և ՚ի յորդոր-  
մանէ և պահպատասին կասդազնոց Յակոբոց :

---

Ա նէստաննեկ և անծանօթ ծոցոյ ծը-  
նունդ միայնոց Հօր Միածինն որդի , որ  
է լոյս փառաց և նկարագիր էութեան  
նորա . մարդասիրապէս եկեալ ՚ի լու-  
մըն մարդարէտկան տառիցն , և զմեր  
նուաստութիւնս ընդ իւրոյ ծայրագու-  
նին միացուցեալ Աստուածութեան՝ և  
կատարեալ զբոլոր անօրէնութին մերձ  
՚ի կտմաւ որ չարչարանս պատուէր տայր  
առաքելոցն՝ վասն ելիցն որ կատարելոց  
էր յԵրաւաղէմ , և յաղագս հանդեր-  
ձելոցն նացա :

Դոկ զծայրագոյնն և զսս իթն իսկա-

պէս սիրոյն, զկատարեալ պարգևն ինքնադիմարար ընձեռէր աշակերտացն՝ ասելով «Օ խաղաղութիւն զիմ տամձեզ՝ և զսաղաղութիւն զիմ թողում ձեզ»։ Եւ զանաղանեալ բացորոշէ՝ ի ստորեայնոցս խաղաղութենէ, զի մի պատրեալ ՚ի վայր քարչիցիմք ՚ի հոմանունն. որ ոչ ունի ըստ իրացն հասարակութիւն, այլ ըստ անուանն միայն զնոյնութիւն հրամայէ. «Ոչ որպէս աշխարհս տայ՝ տամէս ձեզ»։ որպէս զի վերամբարձա առնիցէ զմիտս մեր՝ ձգելով առ ինքն ՚ի բարձրն կոյս՝ յամենայն հետեւակ նըւաստութենէ։ Իստ որոց որք ընկալան և զհետ ընթացան առանց շեղելոյ և յետս դառնալոյ, անաշխարհիկս կոչեաց զնոսա՝ ասելով. «Դուք չէք յաշխարհէ աստի և Պօղոս զնոյն ինքն զՔրիստոս ասէ թէ»։ խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեանն մի, և զմիջնորմն ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւնն ՚ի մարմինի իւրում այսինքն զբարձրայօնութիւն, որ անջրապետէ զընդունողս նորայնատուծոյ. վասն որոյ և այլուր յայտնի ցուցանէ՝ թէ»։ Օ խորհուրդս քակեմք, և զամենայն բարձրութիւն հպարտացեալ ՚ի վերայ զիտութեանն Աստուծոյ,

և գերեմք զամենայն միտս ՚ի հնազանդութիւն Քրիստոսի ։ Տեսանես թէ որպէս ՚ի բաց մերժեն զամբարհաւաճութիւն ՚ի տէրունեանն հօտէ , զի մի ոք ինքնասիրութեամբ շուք եղեալ կամացն՝ անձին իւրում որսասցէ փառը . որպէս և այժմ յոլովս տեսանեմք հակառակութի յեկեղեցիս՝ սակս գահասիրութեան , կրտսեր վարկանելով զհամափառսն ինքեանց զառաքելական աթոռսն , յաղագս մարմնական Ճոխութեամբ մայրաքաղաքացն , մանաւանդ զաթռոն Հայոց հայրապետութե . իւ հիացումն ոչ սակաւ տիրէ իշխանականիս մասին՝ որ յիս . եթէ որք զայսքան աւետարանութիւն խազաղութեան ընկալեալք ՚ի Քրիստոսէ , որ և Քրիստոսիւն խօսէր՝ թէ ընդէ՞ր լծակլուիւք լինիմք ՚ի վերայ ճշմարտութեան , ընդվայր հարկանելով զսահմանն՝ զոր Ասուած եղ՝ և ոչ մարդ :

Որպէս և պատմէ Աւետարանագիրն թէ կոչեաց առ ինքն զաշակերտսն և ընտրեաց ՚ի նոցանէ երկուտասանս , անուանեաց և ետ ասէ նոցա զնոյն իշխանութիւն , և ոչ եղ ՚ի նոսա զանազանութիւն նախադահութեան ըստ մերոց

կարծեաց : Իսկ յորժամ կըեաց 'ի նոսա  
այսպիսի կիրք որպէս մարդիկ ելով և  
դեռևս ոչ ժամանեալք 'ի կատարելու-  
թիւն, ասէ ցնոսա Տէր՝ « || Հէ այդպէս 'ի  
միջի ձերում, որպէս որ 'ի հեթանոս իշ-  
խանքն . այլ որ կամիցի 'ի ձենջ մեծ լի-  
նել եղիցի ամենեցուն յետին ո . Եւ նո-  
ցա զայս որպէս սահման յաւիտենական  
յանձն առեալ առանց երկրայութեան,  
և արգեամբ կատարեալ զարատուէրն ,  
ամենայն ուրեք զկրտսերութիւն ողջու-  
նեին . որպէս Պետրոս առաքեալն ոչ վեր-  
ջանայր կոչել զինքն երեց , բայտ խոնար-  
հագոյն աստիճանին . և զորս ըստ նոցայն  
հաւասար իւր ասելով՝ « Օ երիցունս այ-  
սու հետեւ աղաշեմ իրքեւ զերիցակիցս ո .  
Եւ Պօղոս՝ որ բազումս վաստակեցաւ  
վասն առաւելութեան շնորհացն որ 'ի  
նմա , տրուալ կոչէ զինքն համակարգիցն  
և գլուխ մեղաւորաց . և Մատթէոս յետ  
բարձրագոյն պատուոյն ընդունելոյ , ոչ  
անարժան վարկանի կոչել զինքն մաք-  
սաւոր . և զնոյն մեղ աւանդեցին խրա-  
տելով 'ի պատիւ զմիմեամբք ելանել .  
և զի՞ է երկայնել զիւրաքանչիւրցն զի-  
ջանելն . Իսկ մեր զանց արտրեալ զնոցին  
հետոյն՝ այլ իմն շաւիղ նորոգ հետազո-

տեցաք զարտուղի ընթանալով՝ անհա-  
ւասարութիւն ՚ի հաւասարան մուծա-  
նելով և առաւելութիւն իշխանութե՛,  
որ ոչ ունին գերազանցութիւն ՚ի վերայ  
միմեանց . զոմն գլուխ դնելով՝ և զայլոն  
իբրև անդամք և ստորանկեալք ընդ նո-  
րին տէրութեամք . Արակես ասէ Եկե-  
ղեցին Հռովմայ՝ ընդ Պետրոսի լինել իշ-  
խանութիւ զմետասանսն , և ըստ նոցին  
սարասի զաթոռան նոցա ընդ Հռովմայ .  
զոր ոչ կարեն ցուցանել յառաքելական  
մատեանցն.բայց Եթէ զնախախնամարար  
հրամայեալն Տեառն առ Պետրոս՝ առ ՚ի  
բժշկութիւն մարդկօրէն յանցմանն , և  
յանձնապատան լինելոյն . զայն առեալ  
նիւթ առ ՚ի լրումն իւրեանց ախտին՝ ախ-  
տակից համարելով և զուրբն ինքեանց ,  
և ընդ մարմնաւոր նախազահութե՛ կար-  
ծելով և զհոգեորն և զԱսուածայինն՝  
վարին տիրաբար ՚ի վերայ մեր իբրու ՚ի  
վերայ հնազանդելոց , և ընդ նոքօք հար-  
կեցելոց . զոր ոչ ՚ի լրոյ ծանեայ , այլ ես  
ինձէն Եղեալ ականատես առնն՝ և ա-  
կանջալուր ՚ի նմանէ բանիցն աւետա-  
րանականաց՝ որովք պարծինն մեծ գոլ .  
և զնոյն ինքն յեօթն աւանդեն գլու-  
իրս . սակա որոց յոլովս տրամաբանեցաք .

զորս վերստին բուռն հարցուք հանդերձ  
Աստուծով, զօրս հարցեալ քննեցաք, և  
լուծցուք մի ըստ միոջէ՝ ոչ մտացածին  
ինչ բանիւք և կամ ստայօդ ճարտասա-  
նութեամբ, այլ առ աքելական և մար-  
դարէական բանից վկայութեամբ. և զոր  
՚ի Քրիստոսէ ընկալան հրաման իշխանու-  
թեան: Եւ զայս ոչ առ ՚ի քակտութեան պա-  
տուոյ սրբոյն Պետրոսի, քան և մի լիցի.  
այլ առ ՚ի հաստատութիւն անախտութեան  
նորա և գերազանցութեան աշխարհա-  
կան կրից և նախանձու, և ՚ի յայտ-  
նութիւն նոյնութեան երկուտասանիցն  
իշխանութեան. որ պարդեցաւ նոցա  
՚ի Տեառնէ ոչ ՚ի վերայ միմեանց, այլ  
ըստ իւրաքանչիւր վեճակացն նոցա. և  
զայս ևս ոչ տիրելով, այլ լինել օրինակ  
հօտին յԱստուածայինսն. և տալ զանձն  
ընդ ամենեցուն ՚ի նզովս, զի զամենեսին  
շահեսցին ՚ի Քրիստոս: Եւ նախ զժա-  
մանակն զիցուք վերսպրեալ հանդիսին.  
զի մի անվաւեր և կարծեօք հանդիպե-  
լոցն թուեսցի. և ապա սկիզբն արաւ-  
ցուք հանդիպմանն մերոյ և տրամաբա-  
նութեանցն և ընդդիմադրութեան բա-  
նիցն նոցա:

Եւ եղե այս ՚ի հայրապետութեանն

Հայոց կոստանդեայ քառ ասներորդ երկրորդ ամին . և 'ի թագաւորութեան Արամեան տոհմիս Հեթմոյ , որոյ յոյժ ախորժ թուեցեալ առաջարկութիս՝ յորժամ լուաւ , և հրամայեաց մեզ գրով արձանացուցանել :

Եշին 'ի կողմանցն յիտալիոյ , 'ի հայրապետէն Հռովմայ լիւ-լ ըստ լատինացւոց բառբառոյ , որ թարգմանի 'ի լեզուս մեր Շեպտն՝ բայց ներդործութեան նուիրակ , 'ի յերկիրն Գալիլեացւոց 'ի քաղաքն Պողոմեանց , որ այժմ կոչի Աքափա . որ իշխէր ըստ հոգեսորին ամենայն ծովեղերեացն Փիւնիկեցւոց մինչ 'ի մեծն Անտիոք , և ամենայն Պաղեստինի , որ ընդ Հռովմայեցւովք . և ըստ այնց հնագանդելոց առաքէ և առ Հայրապետն մեր 'ի բանից լուառնելով , որպէս զի ըստ նոցին և նաընծայաբեր լիցի . Իսկ Հայրապետն մեր սակաւ ինչ հոգ տարեալ այնմ , ապա հըրովարտակաւ յուշառնէ 'ի ձեռն պատգամաւորաց՝ զորս առ այլս առաքեալ , զի 'ի յանցին և այնր փոյթ տարցին . իսկ նաև ոչ զնոսա ետես , որպէս ախորժէնն՝ և զայրացեալ ցոսմամբ դարձան . Իսկ 'ի նոյն աւուրս Օշին եղլայր թա-

գաւորին մերոյ , թաղաւորական հրա-  
մանաւ գնաց հրեշտակութեամբ . ի քա-  
ղաքն Աբախա՝ առ Լիկաթն և իշխանն .  
և յետ պատահելոյն միմեանց՝ Լիկաթն  
յոյժ մեղադրել էր Կաթուղիկոսին մե-  
րոյ՝ որպես տմարդոյ . զի եթէ ոչ առէ ,  
վասն օտարսիրութեան և հիւրընկալու-  
թեան , օակայն վասն բնական հարկին  
զոր ունի . ի Հռովմայ եկեղեցւոյն՝ պարտ  
էր աեսանել զմեզ . Եւ նա իրրե եկեալ  
առ թագաւորն մեր պատմեալ զամե-  
նայն և առաւել ես . և նորա ըստ բը-  
նական բարուց ազգիս մերոյ , զայլս  
բարձրացուցանողաց՝ իրաւունս յոյժ  
վարկուցեալ զբատգուանսն , և իսկոյն  
յուշ առնեն Հայրապետին մերոյ . և ա-  
սեն՝ զի պատրաստեսցէ այր հանգերձ  
նամակաւ , կամ հրովարտակ հանգերձ  
ընծացիւք ընդ իւրօց հրեշտակացն զի  
երթիցէ . և նա անյապաղ յանձն առ-  
եալ զպատռեէր՝ պատշաճ համարելով  
և նա զբանն . և իրը դատեցան , որք մեր-  
ձակայքն էին՝ առաքել զոք . իրաւունս  
համարեցան զիմ նու աստութիւնս : Եւ  
հրամայեաց Կաթուղիկոսն ինձ գնալ՝ և  
իմ թէպէտ և ակար դոլով և անպատ-

բաստ 'ի բան , ստեղայն յանձն առ ի զբեթացսն . միայն զայս ետու պատուէր վասն գրելոցն , զի հետազանդութեան անուն ընաւ մի յիշեսցի . զի արք ճարտասանք են և որսորդք բանի , բայց լուհակառակն էին գրել :

Եւ զի ձմեռնային էր ժամանակն ՚ի բաղում աւուրս ծանրանաւեալք , հազիւ հասաք մերձ ՚ի յելն Դեկտեմբերի ամսոյ ՚ի քաղաքն Աքայիա . ընդ մեզ ունելով հրամանաւ կաթուղիկոսին մերոյ , զեպիսկոպոսն Երուսաղեմի զմերասեռ գտեալ ՚ի Տրայիանուպօլիս : Եւ իբրև հանգերձեցան հրեշտակք թագաւորին մերոյ յանդիման լինել Ամիկաթին , և մեզ Ետուն պատուէր՝ զի և մեք պատրաստ լիցուք զկնի նոցա մտանել . և մաեալ նոցա և ասացեալ զպատուէրն , և մեք յոլով ժամս կացեալ առ գուրս մինչտարաժամեալ օրն . և զյամեցուցանելոյն զպատճառն յերկուց իմն կարծեցաք փաստից , թէպէտ և ոչ իմացաք զտոյդ գլն . կամ վասն բարձրայօնութեան նազ գոլով . և կամ խօրհուրդ առնելով և թէտեսցուք՝ եթէ ոչ . և կամ թէ յետ տեսանելոյն զինչ ասասցուք . զի անդ ունէր զդմնեայ ճարտասանսն՝ որ կային

յոյս կոյս ծովաւ . յորոց մին եր Եսպիս-  
կոպոսն Կիոպրոսի :

Հրամայեցին ասլա և մեզ մտանել  
դեռևս անդ գոլով և հրեշտակքն մեր,  
և իբր մատուցաք զմատեանն և զընծայ-  
որն՝ զոր ՚ի կաթուղիկոսէ , առեալ զմա-  
տեանն եւտ ցԵսպիսկոպոսն մեր և ասէ  
ընդ հեգն , գու ընթերցիր զայդ , և հը-  
րաման առեալ սկսաւ զպատաւէր Հայ-  
րապետին մերոց . և իբր փաքք մի ասա-  
ցաք ոչ եւտ թոյլ աւարտել . այլ ինքն  
սկսաւ զպացեալ , ասէ՝ առէք և զրե-  
րեալ իրդ . զի ես ոչ եթէ վասն մար-  
մաւոր շահից և ընչից խնդրէի զգալն  
կաթուղիկոսին Հայոց , այլ վասն հոգե-  
ւոր կարդի և օրինաց . զի մի խրամա-  
տեալ օցաեսցի ցանկն Հայրենի . և շոր-  
թեալ անդամքն ՚ի զլիսցն՝ յապականուի  
մատնեսցին . որպէս թէ այլ առաքելական  
Աթոռքն յեկեզցւոյն Հռովմայն . զոր  
Տեր Հասասատեաց և ոչ մարդ . որպէս  
ասէ առաքեալն Պօղոս՝ թէ և Հիմն այլ  
որ ոչ կարէ զնել՝ քան զեդեալն որ է  
Յիսուս Քրիստոս ու Եւ վասն այսորիկ  
խնայելով ՚ի ձեզ խնդրէաք , զի եկեալ  
յօդեսցի ՚ի զլուխն եկեզցւոյ :

Եւ թէ յազդագոյաց ծերութեանն

զի լուեալ իսկ է մեր, ոչ կարէք անձամբ  
գալ, որպէս ողորմելով ասեմ՝ ընդէր ոչ  
կանուխ առ աքեաց զոք . և եթէ յազագս  
հարկի բերմանցն . և դշեկին էր յամելն,  
զի լուաւ ՚ի մէնջ՝ զոր բերեր թերութիւնի  
միոյ առն պակասութիւն . և այժմ զի՞նչ  
նուազեաց . և այլ յոլովս խօսեցաւ՝ զոր  
ոչ կարեմ ընդ դրով արկանել, և մեք  
լուռ և եթ կայաք : Եւ ՚ի հանդարտելն  
փոքր մի՝ ասէ ցիս դեսպան թագաւոր  
բին մերոյ թուվմասն, արի աղաւեան կրկին  
զի առցէ զընծայսք . և իմ աղաւեալ յոյժ .  
և ոչ առ . և ասլա յարուցեալ նոյն ինքն  
՚ի դիմաց թագաւորին մերոյ աղաւեաց,  
որպէս ՚ի դիմաց որդւոյ իւրօյ՝ զոր ինքն  
կոչեր . լուեալ ասէ որդին քո՝ յոյժ դըժ-  
ուարանայ եթէ ոչ առնուցուս . և նա  
զնոյն պատճառեալ եթէ ոչ վասն զգալի  
իրաց ագահութեան էր խնդիրն իմ, յո-  
րըս ծաղք եղեալ յոյժ յետայ աղաւանօք  
խնդրեաց :

Եւ ասէ Ամիկաթն կերիցուք հաց . և  
մեր ոչ առեալ յանձն, ելեալ գնացաք  
յոյժ արտմեալք ընդ արհամարհանս ա-  
ռաքելսկան Աթոռոյն Հայոց . և ինձ  
այսպէս թուի թէ՝ եղե այս ՚ի նախախ-  
նամաւթենէ Աստուծոյ, զի կամէք շար-

Ճել զմեղ՝ ի գիւտ խորհրդական և արժանաւոր երկուց բանիցս այսոցիկ՝ զորս հանգերձեալ եմք պատմել. Եւ յետ այսորիկ իբրև տօն ընդմիջեցաւ. կոչե և քաղցր ցուցանէ մեզ գեմս, և ասէ՝ ի բազում աւուրս կամ էր ինձ զրուցառ բել ընդ քեզ. զի լուեալ է իմ վասն քո, զի այր բանիբուն ես դու յազգն քո, զի օգտեալք թերես ՚ի քեն. բայց հարկ տօնիցս ոչ ետ թօյլ մինչե ցայս, և այժմ խօսեսցուք :

Եւ իմ պատմխանի արարեալ առայն՝ ասեմ, եթէ ոչ եմ որպէս կարծեարդ. և որ ասացն ընդ քեզ, թերես ոչ էր տեղեակ յետնութեանս իմայ. այլ քոյդ յերկուց պատճառաց՝ զոր ասեադ, մի՛ բատ իմաստասիրական բարուցդ ան յաշաղկոտութեան. և միւսն՝ բատ աշակերտութեան Փրկչին անարդամեծ արտթեան, զոր ինձ էր ասել. զի յոյժ ախորժ էր ինձ գալն. սակս զի աշակերտեալ օգտեի. յորոց յոյժ էր հետեւեալ Աստուածաշունչ գրոց. բայց որով արտաքերեցից բանս սրտիւ, զի տրամաւթիւն ոչ սակաւ. էր ինձ՝ զոր արարերն, զի ոչ ընկալար զրնծայն մեր, զի այն ոչ առաւելութիւն էր առ ձեզ, և ոչ նուա-

զու թիւն՝ առ որ առաքեացն . և ոչ բգնամակն ընթերցար՝ եթէ վկացէի բանիւք թէ ոչ . և զպաստերն ոչ լուար :

Եւ ժպտեալ առ այն ասէ . այս արասցուք՝ որպէս կամիս . միայն խօսեսցուք . և ասեմ, եղիցի ըստ բանի քում . և ասէ՝ այր իմաստուն ես՝ որպէս ասացի . և զոր ինչ ինդրեմ, առնես պատասխանի . Եւ էր ժողով առ նա մեծ յաւուր յայն միկ . քաղաքապետն որոյ անուն ջուփի բի այր խաղաղաբարար . և Մայէստր<sup>1</sup> Դանիէլուն . և Գումանադուր<sup>2</sup> տանն հիւանդանոցին , և ամենայն իշխանը ծովեղերեաց բաց ՚ի Բլէնյէն<sup>3</sup> , և բռվանդակ Առաքալիքն<sup>4</sup> . ոչ զիտեմք զպատճառ ժողովոյն թէ վասն մեր էր , և թէ յայլ ողեալըս : Եւ ասեմ, զիարդ կարացից ընդազգի միոյ սղջոյն առնել պատասխանի , մանաւանդ եթէ վասն եկեղեցւոյ է ինդիրն . և մի հայիր յայս՝ եթէ զի առաքեցայ այսր իրր զկատարեալ, զի բռզում անգամ լինի յարքունիս , զի վատացն պատահէ բարեբախտութիւն . զի եկեղեցին հայոց յոյժ է փարթամ իմաստնովք և վարժեցելովք Աստուածա-

1 Տէր :

3 Խըման :

2 Գումանադուր :

4 Փասդաբան :

շունչ գրոց և տեղեկօք՝ որոց վերջինն  
ես եմ։ Ի՞այց որոց բաւական լինիմ, և  
զորոց ունիմ հրաման և վստահութիւն  
՚ի Հայրապետէն մերմե՛, տաց ըստ կարո-  
ղութեան իմոյ պատասխանի ։ և որոց  
ոչ՝ գրեցից և տարայց ։ և նա հարուստ  
ժողովեալ քննեալ հանէ ՚ի փարթա-  
մութենէ գանձուց իւրոց ։ զոր ՚ի հնոց  
և ՚ի նորոց հանեալ, առաքեսցէ առ ձեզ  
պատասխանի ։ և հաճոյ թուեցաւ բանն  
յոյժ ամենեցուն։ Այս ասեմ՝ միայն տա-  
ցես ինձ տեղի բանի և պատասխանւոյ,  
զի ասէք յոլով՝ և սակաւ լսէք ։ և արդ  
օրովհետեւ իշխանութիւն ընկալեալ հար-  
ցանել ։ ասացեք՝ և թէ հիմն այլ ոք ոչ  
կարէ դնել ասէ առ աքեալն Պօղոս՝ քան  
զեղեալն որ է Յիսուս Քրիստոս ։ և այդ  
յիրաւի ։ և ես յաւելում զնոյն ինքն յա-  
ջորդ բանն՝ « Եթէ ոք շինեսցէ ՚ի վե-  
րայ հիմանս այսորիկ հաստատեսցէ ո ։  
Այս արդ շինեսցուք մի խոտ յայրումն  
հրոյ ։ այսինքն՝ արտաքոյ նոցին վարդա-  
պետութեն, այլ ոսկի և արծաթ փոր-  
ձեալ և զտեալ հրով հողւոյն ըստ նո-  
ցին բանիցն ։ զի մնասցէ ։ և որ շինեն՝  
վարձս առցէ ըստ առաքինի ճարտարա-  
ցըն, և ասեն այս ։

Եշտամ, ուստի ունի եկեղեցին Հռավիրայ զիշխանութիւնդ զայդ, զի ինքըն դատէ զայլ առաքելական աթոռան և ինքն յայլոց ոչ քննի. զի յաւէտ մեք ունիմք կար ըստ առաքելոցն օրինակի դատել զձեզ. և դուք ոչ կարէք քննել զմեզ. և լուեալ զբանս զայս՝ յոյժ խոժու ռեցան. բայց ոչ արտաքերեցին վասն մեծահոգողութեան բարուցն. այլ հարցանեն հանդարս բարբառամի. և ո՞ւ ետ ձեզ զպատիւդ զայդ. Եշտամ, մի խիստ թուեսի բանդ այդ առաջի ձեր, բանզ զի խոսացաք եթէ ոչ ելցուք արտաքս յԱստուածաշունչ գրոց. և ցուցանեմք ձեզ 'ի ծայրագոյն մստեանցն՝ զի դատեցին այլ Առաքեալքն զՊետրոս՝ խըզ ձելով ևս 'ի նմանէ, մինչ ինքն ել յԵրուսաղեմ արդարացաւցանել զանձն յորժամ մկրտեաց զկառնելիսս, որպէս պատմէ Ղօւկաս 'ի գործս առաքելոցն թէ և | ուան առաքեալքն և եզրարքն, որ եին 'ի կողմանս Հրէաստանի՝ զի և 'ի հեթանոս ընկալան զբանն Աստուծոյ, Ինայց յորժամ ել Պետրոս յԵրուսաղեմ, խղճէին 'ի նմանէ՝ որ 'ի թղփառութենէ անտի հաւատացեալքն եին, թէ եմաւտ առ արս անթրիստս՝ և եկեք

ընդ նոստ . և սկսաւ . Պետրոս պատմել  
նոցա կարգաւ . զոեսիլն , մինչեւ 'ի վախո-  
ճան . . . և իբրեւ սկսայ խօսիլ , ասէ՝  
Հոգին սռւրբ եկն 'ի վերայ նոցա , և յի-  
շեցի զրանն Տեւառն զի ասէր՝ Յովհաննես  
մկրտեաց 'ի ջուր , բայց դուք մկրտիցիք  
'ի Հոգին սռւրբ ու .

Տեսանե՞ս՝ զի ոչ միայն ոչ գիտէին ըղ-  
նա իշխան՝ առնել զոր ինչ և կամեր ,  
այլև իշխանաբար խղճեալ դատէին ըդ-  
նա : Եւ Պետրոս որպէս ոչ գիտելով զին-  
քըն իշխող նոցա , ոչ առնէ իշխանաբար  
պատասխանի որպէս Տէրն՝ զի ասէր « Իւ-  
խանութիւն ունիմ յիմումն տալ որպէս  
և կամիմ » այլ խոստովանի յԱստուծոյ  
զհրամանն գոլ , և ոչ իշխանութեամբ՝  
ասէ « Իսկ արդ՝ եթէ զհասարակաց  
պարգևն ետ Աստուծոյ և նոցա՝ որպէս  
և մեզ՝ 'ի հաւատալն 'ի Տէր Յիսուս Քը-  
րիստոս , իսկ արդ՝ զի՞նչ կարող էի ար-  
գելու զԱստուծոյ . և իբրեւ լուան զայտ  
և տպա լոեցին ո . յայտէ՝ թէ 'ի ստէոլ  
քննութէն : Տեսանե՞ս թէ որպէս յայտ  
առնէ զի ոչ է գլուխ Պետրոս : Եւ զի-  
մեմ զի ասեն առ այս , եթէ ոչ զառա-  
քեալսն ասէ խղճեալ՝ այլ զդեռևս հա-  
ւատացեալսն , և զայն արտը Պետրոս

վասն նոցաւ տկարութեան՝ շահելով ըզ-  
նոսա, որպէս ասէ Պօղոս՝ թէ և Օտկա-  
րացեալն 'ի հաւատու ընկալարուք ու :  
Եւ որս տսեմք՝ թէ ոչ դոյր առ նոսա  
տկար, զի ասէ թէ և ի յր ամենեցուն սիրու  
և անձն մի ու, և դարձեալ եթէ ոչ էին  
մետասանքն, ու մ պատասխանի առներ  
Պետրոս թէ և իրբե սկսայ խօսիլ, Հո-  
գին սուրբ եկն 'ի վերայ նոցաւ, որպէս  
'ի վերայ մեր 'ի սկզբանն ու : Ի սկզբանն 'ի  
վերնատանն ոյք էին, եթէ ոչ երկոտա-  
սանքն միայն, և կամ ու մ պատմեաց, ե-  
թէ ոչ լսողացն 'ի տեառնէ և գիտողաց  
բանին թէ և Ծիչեցի զբանն Տեառն՝ զոր  
ասէրն թէ Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր,  
բայց դուք մկրտիցիք 'ի Հոգին սուրբ ու :  
Տեսանէք թէ որպէս ստուգեցաւ դա-  
տումն Պետրոսի 'ի մետասանիցն . և ոչ  
ուրեք երեի թէ Պետրոս այսպէս դա-  
տեալ է զմետասանն :

Եւ դարձեալ ասեմ յաղագս սիրոյ,  
զորոյ ունին վատահութիւն յանձն առ-  
նուլ տղաշեմ զձեղ ըստ առ աքելոյն  
դթութեամբն Աստուծոյ, և խրատ  
տամ որպէս եղբայր յեղբօրէ զօրաց-  
եալ ոչ դնել զլուծն զայն յեկեղեցի,  
զոր ոչ բարձին հարթն մեր, այսինքն՝

զծառայական հնագանգութիւնն՝ և ոչ  
մեք կարեմք բառնալ։ Իսկ յաղագս սի  
ըսյն՝ զոր ունիմք հրաման յԱստուծոյ  
և 'ի սրբոց առաքելոցն՝ պատրաստ եմք  
որպէս ասաց Քրիստոս՝ թէ և Յայսմ  
ծանիցեն զձեզ՝ թէ իմ աշտկերտք էք  
եթէ սիրիցէք զմիմեանսոն, և Պօղոս յատ-  
կացուցանէ առաւել հարկաւոր գոլ 'ի  
վերայ եկեղեցականն զարդու՝ զսէրն,  
ասելով և Օորս եղ Աստուծոծ յեկեղե-  
ցւոջն՝ այս են, նախ՝ զառաքեալսն, երկ-  
րորդ՝ զմարդարէան, երրորդ՝ զվարդա-  
պետան ոն, և որ 'ի կարգին են անդամք  
եկեղեցւոյ։ Եւ յորժամ թուէ զիւրա-  
քանչիւրոց շնորհան՝ ասէ և 'Յախան-  
ձաւոր լերուք լուին։ բայց ես առա-  
ւել ճանապարհ ցուցանեմ ձեզ, զի թէ  
զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտա-  
կաց, և թէ ունիցիմ մարդարէութիւնն  
և զհաւատոս մինչեւ զլերինս փոփոխելոյ։  
և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմոն։

Եւ Յովհաննես ասէ 'ի Կաթուզիւ-  
կէն թէ և Այս է պատուիրանն Ճօր, զի  
հաւատասցուք յանուն որդւոյնորա Յի-  
սուսի Քրիստոսի, և սիրեցուք զմիմեա-  
նըս, զի այս է պատուէք նորա ու Եմդ՝  
այսմ բարձրագոյն պատուիրանացս որ

յԱստուծոյ՝ և աստուածայնոցն յամենայնի պատրաստ է Եկեղեցին Հոյոց . ոչ արդեն իսկ սկսմամբ , այլ 'ի վաղընջուց որպէս նախնական աւանդեալքերէ Ժառանգութիւն զսէրն . մանաւանդառ Հռովմայեցիսդ , որպէս և վկայեն որք աստ կան 'ի ձերոցդ՝ որ ոչ են անտեղեակ մերոցն և առ այլ ազդս՝ թէպէտ և ոչ համեմատ ձեզ , սակայն անդորրացեալ են իւրաքանչիւր ազդաց առաջնորդքն ըստ կարգի իւրեանց և պաշտաման յաստուածապարգեւ թագաւորութիւնը , ոչ ինչ ունելով հարկ յԱստուածասէր թագաւորէն մերմէ՝ յաղագս քահանայական կարգի և աւանդութեան Եկեղեցւոյ՝ զոր խնդրեմք յԱստուծոյ անշարժ մնալ 'ի Հոյս :

Ասէ Լիկաթն՝ ոչ եթէ խափան լինելով պատռիրանի սիրոյն խնդրեմք զհնազանդութիւն , այլ որպէս շաղկապ լինելով որպէս յապացուցէն ունիք ուսանիլ որպէս բոլոր անդամք 'ի մարմնի ամբողջ են 'ի դլուին յօդմամբ սիրով , այսպէս և ամենայն Եկեղեցիքն պարտին հնազանդ լինել Եկեղեցւոյն Հռովմայ . որպէս դլսոյ՝ զի ամբողջ մնասցեն անդամբն :

Եւ պատասխանի ետու առ այս . թէ  
հնազանդութիւն ոչ կարեմք առնուլ  
յանձն՝ որպէս յԱստուծոյ պարդեեալ  
մեզ ազատութիւն հաւասար ձեզ ըստ  
երկոտասանիցն՝ զի հնազանդութիւնը  
ու այական է և աշխարհական և ոչ ու  
ու աքելական , որպէս սահմանեալ աւան  
դեցին մեզ առ աքեալքն թէ որո՞ց և ուժ  
պարտ է հնազանդ լինել . գրէ երանելին  
զետրոս թէ « Հնազանդ լերուք մարմ  
նեղէն ստեղծուածոց՝ եթէ թագաւո  
րի , իբրև առաւել ումեք ո և Պօղոս  
թէ « Հնազանդ լերուք տերանց ո և ու  
զերկոտասանսն միմեանց իշխեցին գրել  
գիտելով զի Աստուած բանն երարձ ըն  
ծառ այական հնազանդութիւնի յինքեանց ու  
սելով « Դուք շեք ծառ այք . զի ծառայ  
ոչ ինչ գիտե՝ զտեառնն , այլ դուք բա  
րեկամք էք իմ և խորհրդակիցք ո : Աբով  
զիա՞րդ կարիցեմք յանձն առնուլ զհան  
զանդութիւն վերստին ծառ այ լինել հա  
կառակ ազատութեանն՝ որ ՚ի Քրիստոսէ  
տուաւ մեզ : Եւ վասն այսորիկ լուսու  
այն օր , իսկ վաղիւն ասէ Ամեկաթն՝ ու  
ինդքեմք ՚ի ձենջ հնազանդութիւն որ  
պէս ծառ այից առ տէր , այլ որպէս որ  
դւոյ առ հայր , որպէս գրէ Պօղոս թէ

“ Որդիք հնազանդ լեռուք հօր ո :  
Պատասխանի ետու և ասեմ, թէ  
յայդմ մասին Քրիստոս արդելու զմեզ  
թէ և Հայր մի կոչեք զբք ձեզ՝ ՚ի վերայ  
երկրի, զի մի է Հայրն ձեր՝ որ յերկինս  
է ո, և Պետրոս երկրաւոր է՝ և ոչ երկ-  
նաւոր . արդ զիա՞րդ կարեմք թողուլ  
զորդեգրութիւն Հօրն երկնաւորի, և  
լինել որդի Պետրոսի՝ անսալով խրատու  
ձեր՝ և զանց առնել զիարատովն Քրիս-  
տոսի Աստուծոյ մերոյ . զի յայսմ մասին  
և ինքն Պետրոս զգուշացուցանէ զմեզ  
թէ և Հնազանդիլ պարտ է Աստուծոյ ա-  
ռաւել քան մարդկան ո . “ Դարձեալ զի  
հարս սովոր եմք կոչել վերստին ծնողսն  
աւազանաւն . և առաքեալն Պետրոս ոչ  
է մկրտեալ զմետասանսն, և նոքօք ըշ-  
մեզ . զիա՞րդ կոչիցեմք զնա Հայր . Իսկ  
եթէ ասիցեն . ընդէ՞ր բնաւ բառնայք  
զհնազանդութիւն յեկեղեցւոյ, ոչ յի-  
շեք զասացեալսն ՚ի Պօղոսէ առ Կարլն-  
թացիսն թէ և “ Դիտէք զտունն Ստեփա-  
նեայ և Փորտունատեայ՝ որք զանձինս  
իւրեանց կարդեցին ՚ի պաշտօն սրբոցն.  
աղաչեմ զի և դուք Հնազանդ լինիջիք  
նոցա ո և որ սոցին նման դտեալ ՚ի դի-  
րըս . Եսասցուք նոցա՝ թէ ոչ զստորնայ-

նոցն հնազանդութիւն բառնամք ՚ի վեր-  
նոցն , այլ զերկոտասանիցն միայն , որք  
զմի և զնոյն ունին իշխանութիւն և պա-  
տիւ :

Ասէ Նիկաթն հանդերձ ընկերօն  
շարժեալք յոյժ , զիարդ ոչ է գլուխ  
Պետրոս առաքելոցն :

Պատասխանի ետու և ասեմ , ոչ գի-  
տեմ զզիարդն :

Եւ ասէ . որպէս ոչ գիտես , զի յետ  
համբառնալոյն զնա եղ գլուխ Քրիստոս  
Եւ ասեմ , բնաւ այդմ ոչ եմ տեղ-  
եակ . և այս յերկուց սկատճառաց՝ կամ  
՚ի մոռացմանէ յետ ընթեռնլոյն որպէս  
մարդ ելուլ , և կամ թէ ոչ հասին առ  
մեզ գրեալքն . այլ ինձ յոյժ է պարծանք՝  
եթէ յայսմ աշակերտեցայց եկեղեցւոյն  
Հռովմայ , աղաչեմ ուսուցանել ինձ ,  
բայց ոչ ՚ի բանից արտաքոյ չորիցս այ-  
սոցիկ գրոց . Աւետարանին և պրակացն՝  
և թղթոցն կաթուզիկէից , և Պօղոսի  
առաքելոցն , և այսոցիկ մեք հնազանդիւ-  
ցեմք որպէս Աստուծոյ հրամանացն :

Ասէ Նիկաթն որպէս օրինակաւ ,  
յորժամ թագաւորն ձեր ելանէ յերկ-  
րէն ոչ կացուցանէ ՚ի աւեզի իւր գլխա-  
ւոր :

Եւ ասեմ, այս :

Եւ ասէ, հնազանդիք նմա առ հասարակ :

Եւ ասեմ. ոչ վասն նախապատռութեան հնազանդիմք, այլ որբան տայ նըմա իշխանութիւն թագաւորն :

Եւ ասէ. այսպէս ամենայն Պատրիարք և Կաթուղիկոս և արծուէոք և վեոք պարտին հնազանդ լինել աթոռոյն Պետրոսի որպէս գլխաւորի, և զի յաճախ ըստ այսմ կարգի թուէր զկաթուղիկոս. ընդ որ յոյժ բերեալ իմ, զոր յետոյ պատմեսցուք զպատասխանիս :

Եւ ասեմ առ այն, եթէ ցուցանէք յառաքելական մատեանցն, եթէ յելանելն իւր Քրիստոս եղ զՊետրոս գլուխ Երկոտասանիցն՝ ընդունիմք, որպէս և մք ծառայք նորա : Ի՞այց և մէք ոչ եմք անտեղեակ ելից Փրկչին . ըստ այնմ թէ «Ելանեմ ես առ Հայրն իմ» . զի Երկուեն ելք, մինզօրութեամք՝ յորժամ հանդերձեալ էր կամաւոր չարչարանօք մահուն ելանել, ասէր «Երթամ ես առ առաքիչն իմ. իսկ միսիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա եկեալ ուսուսցէ ձեզ զամենայն և յիշեցուսցէ ձեզ՝ զոր ինչ ասացի ձեզ» :

Իսկ յերկրորդն և յիսկապէս համբառնալն պատմե՞ Առկաս թէ՞ և Յայնժամ եքաց զաջնոցա և ասէ՞ . դուք էք վկայք այսոցիկ որ եղե՞ զոր յառաջագոյն ասացի՞ , և ահա ես առաքեմ զաւետիս հօր իմոյ ՚ի ձեզ . և դուք նստարուք ՚ի քաղաքիդ Երուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ՚ի բարձանց . Եհան զնոսա մինչեւ ՚ի բեթանիա , և ամբարձեալ զձեռոս իւր՝ օրհնեաց զնոսա . և եղե յօրհնելն նորա զնոսա՝ մեկնեցաւ ՚ի նոցանէ՞ և վերանայր յերկինս . և նոքա Երկրագագեալ դարձան յԵրուսաղէմո՞ , և յայսոսիկ առաւել եցոյց զհամապատութիւնն . զի ձեռնադրեաց զնոսա և օրհնեաց համակարգո՞ , և յետիւր ՚ի Հոգին սուրբ արար զնոսա ապատան , և ոչ ՚ի Պետրոս . արդ՝ ուր է դընելն զնա դլուխ Երկոտասանիցն :

Դարձեալ ասեն . ապա ոչ է դլուխ Պետրոս առաքելոցն , և կորի յաճախ՝ օրպէս զի յուրաստ եղէց՝ զի շարախօսեսցեն զինէն իբրև զհերեափիկոսէ .

Եւ ասեմ . ոչ կարեմ ասել թէ է . և կամ թէ ոչ է . զի յերկուց կողմանց է վասնգն . զի որպէս ասիցեմ թէ ոչ է՝ հակառակ Եկեղեցւոյն Հռովմայ , և զի-

արդ կարիցեմ տաել թէ է . զի ոչ եմ  
ընթերցեալ 'ի նոր կտակարանս :

Եւ ասեն , ոչ գրեալ է՝ թէ դու ես  
վէմ , և զոր յաղագս վիմին՝ յիւրում  
տեղւոջն ասասցուք . Իսկ ընդդիմակայ  
ութեամբ տաեմ . այլ է վէմն անուն , և  
այլ է գլուխն . գլուխ խոստացայք , ցու-  
ցէք յատուկ և ես ընդունիմ . Եւ իբ-  
րև ոչ կարացին 'ի գրոց ցուցանել . բա-  
նիւ ջանացին որսալ :

Եսեն , դու վարդապետ գոլով որպէս  
քարոզէիր :

Եսեմ՝ որպէս յատենի Տեառն հա-  
սեալ կամ 'ի պատասխանատրութիւն  
ընդ որոց խօսեցայց , վասն որոյ հարկ է  
զճշմարիտն ասել . ես 'ի բեմբասացու-  
թեան խմում որպէս գլխաւոր վերա-  
պատմեի զՊետրոս և զՊօղոս :

Ես Ախելաթն , ոչ է գլուխ Պօղոս .  
քանզի միոյ եկեղեցւոյ , ասէ՝ երկու  
գլուխ ոչ վացելէ :

Եւ ասեմ , այդ յիրաւի՝ քանզի ճր-  
մարիտ գլուխ եկեղեցւոյ Քրիստոս է ,  
որպէս ասէ առաքեալ առ Եփեսացիս՝  
եթէ և Յարոյց զՔրիստոս , և զնա եղ  
գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղե-  
ցւոյ , որ է մարմին նորա . լրումն՝ որ զա-

մենայն յամենայնի լնու ։ . և ոչ Պետրոսի ասէ մարմին զեկեղեցի և զնա լցուցանող ։ Եւ յաղագս այսր յոլով եղետարաբերութիւն, մինչ զի ձանձրանալ լսողացն, զի կրկնաբանէին եթէ դուզիարդ ասէիր զՊետրոս գլուխ ։

Եւ ասեմ կարձառօտ, որպէս զՅովհաննէս Եփեսոսի և զՅովմաս Հնդկաց, և զԲարթուղիմոս Հայոց և զայլսն ։

Եւ ասեն, այդպէս միայն և ոչ ընդհանուր ։

Եւ ասեմ, ընդհանուր գլուխ Քրիստոս է որպէս ասէ դարձեալ Պօղոս առնոսին, թէ և Այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոց և ինքն է Փրկիչ մարմնոց ։ , և ոչ է արժան հրաժարել մեզ՝ի փրկութենէ գլուխոյն, որ է Քրիստոս ։

Եւ ասեն, Քրիստոս 'ի յերկինս է գլուխ, և Պետրոս 'ի յերկը ։

Եւ ասեմ, այդմ դարձեալ Պօղոս առնէ պատասխանի 'ի Կողոսացւոց թըլթին՝ եթէ և Առվաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս և որ ինչ յերերի՝ որ երեին և որ ոչ, եթէ աթռոք, եթէ տէրութիւնք, եթէ սլետութիւնք և եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ

նովաւ՝ և 'ի նոյն հաստատեցաւ և նովաւ եկաց բռվանդակ . և նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ , որ է սկիզբն անդրանիկ 'ի մեռելոց՝ զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալու . տեսանես թէ որպէս ընդ միով սպարփակեաց գլխով զերկնայինս և զերկրաւորս եկեղեցի . և եբարձ զայդպիսի կարծիք .

Եւ արդ ասացեալ յաղագս տրամաբանութեան սկիզբն արասցուք բանիցըն , զոր յաւետարանչացն բերեն ընդդէմ մեր , որովք մեծ կարծեն գոլ զինքեանս . զոր խոստացաք ըստ մասին անցանել .



## ԸՆԵ ԸԱՌԱՋԻԿԵ

Ասէ Լիկաթն . ընդ Պետրոս միայն ասաց Տէրն , « Դու ես վեմ և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմո : »

Պատասխանի ետու և ասեմ , նախ վեմը՝ զոր ասէք յորոյ վերայ յարդարի շինուածն՝ ըստ օրինակի զգալի ձեռակերտաց ոչ ցուցանի գլուխ . քան թէ յոտն յաւետ , որպէս նոյն ինքն Քրիստոս հրամայէ , թէ և Որ լոէ զրանս իմ և պահէ :

նմանէ առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն  
իւր ՚ի վերայ վիմի զի իջին անձրեք, շնչե-  
ցին հողմք և խաղացին գետք և բաղխե-  
ցին զտունն՝ և ոչ կործանեցաւ . քանզի  
՚ի վերայ վիմի հաստատեալ էր ա.

Տեսանեա՝ թէ որպիսի վկայիւ հաս-  
տատեցաւ թէ ոչ է գլուխ վէմն՝ այլ  
ստորին մասն .

### Այլ դաս .

Օյ ոչ եթէ նորոգ եդ նմա զվէմն  
անուն որպէս մրցանակ դաւանութեան,  
այլ զառաջինն յուշ առնէ . զոր ՚ի կոչմա-  
նըն անուանեաց . որպէս և գրէ Մատ-  
թէոս՝ թէ և Վինչդեռ անցանէր Յիսուս  
ընդ եղբ ծովուն Գալիլեացւոց , ետես  
երկուս եղբարս . զԱխմոն՝ զկոչեցեալն  
վէմն . և Յովհաննէս զնոյն վկայէ թէ  
և Կը մին յերկուց անտի եղբայր Սիմո-  
նի վիմի ու արդ վէմդ անուն կանխա-  
գոյն է ՚ի վերայ Պետրոսի որպէս ցու-  
ցաւ՝ և զի ոչ ասաց թէ , դու եղի-  
ցիս վէմ , այլ թէ զի դու ես վէմ , որ-  
պէս թէ դու ինքն վէմ ես . Վաղա յայտ-  
է , թէ զմետասանսն ես կոչեաց յայսմ  
վայրի վէմ . զի ոչ ասաց եթէ ՚ի վերայ  
քո շինեցից զեկեղեցի իմ՝ այլ եթէ ՚ի

վերայ այդը վիմի շինեցից . զառ ընթերսն ցուցանելով , զի վէճք են և այլքն 'ի հիմունս եկեղեցւոյ . որպէս վկայէ Եսայիաս վասն այօր , որպէս 'ի դիմաց Աստուծոյ թէ և ԱՇաւասիկ պատրաստեալ եմ կարկեհան զքարինս քո , և զհիմունս քո շափիւղայ , և ածից շուրջ զքե պարիսպ յընտիր քարանց պատուականաց , և զորդիս քո խրատեալս յԱստուծոյ ո .

Տեսանես թէ որպէս ցուցանէ զերկոտասանսն զօր ընտրեաց Տէր . և որդիք խրատեալք ՞յք են , և թէ ոչ՝ որք խրատեցաք յԱստուածն բանէ . և Դաւիթանէ , և Հիմունք նորա 'ի լեռոն սուրբ նորան : | Եառն ասէ զեկեղեցի ըստ այնըմ թէ և Տէր ովլ կոցցէ 'ի խորանի քում , կամ ովլ բնակեցի 'ի լեռոն սուրբ քոն . և զի ոչ միայն Երկոտասանն քըն են հիմունք եկեղեցւոյ՝ այլ և մարդարէքն . զի նոքա վաստակեցին , և առաքեալքն 'ի վաստակս նոցա մտին՝ զի հասարակ վայելեսցեն ըստ տեառն : | Եւ Պօղոս որ Քրիստոսիւն խօսէր , կնքէ ընբանս . զի ճշմարտէ ասելովին առ Եփեսացիս՝ և Ապա այսուհետեւ ոչ էք օտարք և պանդուխոք . այլ քաղաքակիցք որբոց և ընտանիք Աստուծոյ . շինեալք 'ի

վերայ հիման առաքելոց և մորդարէից .  
որոյ գլուխ անկեանն է Յիսուս Քրիս-  
տոս , յորում ամենայն շինուածն յօ-  
դեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար  
սուրբ տէրամբ ո : Եհա եղբարբ յայտ ե-  
զե՝ թէ ոչինչ ունի Պետրոս առաւելու-  
թիւն վասն վէմն անուանելոյ , այլ հա-  
սարակ է ընդ առաքեալս և ընդ մար-  
դարէս 'ի հիմունս եկեղեցւոյ . որոյ գը-  
լուխ Քրիստոս է , և ոչ նա :

### Այլ պատմեան :

'Կարձեալ զդաւանութին ասէ վէմ  
Քրիստոս , զոր դաւանեաց զնա Պետրոս,  
թէ և 'Կու ես Քրիստոսն որդի Աստու-  
ծոյ ո ըստ նախագուշակութեանն Դա-  
նիելի , զի ասէ և Տեսանէի՝ և ահա վէ-  
մըն առանց ձեռին հատաւ 'ի լեռնէն ո  
և Պօղոս ասէ , թէ և Ա էմն էր ինքն Քը-  
րիստոս ո . վը այսորիկ ասէ Տէր . և Եթէ  
'ի վերայ այդր վիմի , այսինքն՝ 'ի վերայ  
այդր դաւանութեան շինեցից զեկեղե-  
ցի իմո և զի յառաջքան զՊետրոս դա-  
ւանեալ էին մետասանքն զՔրիստոս , յոր-  
մամ 'ի չորրորդում պահու գիշերին  
գայր առ նոսա 'ի վերայ ծովուն . և ա-  
շակերտքն առ ահին զաղաղակ բարձին .

և Յիսուս խօսեցաւ և ասէ ցնոսա , մի  
երկնչիք Ես եմ . ասէ Պետրոս , Տէր եթէ  
դու ես , ասա ինձ գալ առ քեզ . և ա-  
սէ Եկ . և 'ի գնալն կամէք ընկղմիլ և  
ձեռն ետ նմա . և իբրև ել 'ի նաւն ընդ  
իւր ունելով զՊետրոս և հանդար-  
տեաց հողմն . մատեան որք 'ի նաւին է-  
ին՝ երկիրակադին նմա և ասեն , արդա-  
րև որդի Աստուծոյ ես դու . և Պետ-  
րոս ոչ էր ընդ նոսա ո . վասն այսորիկ 'ի  
հարցմանն Որդւոյ , շարժեաց զնա Հայր  
'ի դաւանել՝ զի մի նուազ երեւոցի-  
յայսմ մասին քան զմետասանսն . Ասէ  
Լիկաթն , զՊետրոս Հայր շարժեաց ըստ  
ասացելումն :

Առ որ ասեմ , թէ և զամենեսեան  
շարժէ Հայր ըստ քանին Տեառն . թէ  
և Ոչ ոք գայ առ իս՝ եթէ ոչ Հայր իմ  
ձգեսցէ զնա ո , և Յովհաննէս թէ « Որ  
առ աքեացն զիս , նա ասաց , թէ յօյր  
վերայ տեսանիցես զՀոդին , նա է . և մեք  
տեսոք և վկայեմք՝ թէ սա է Որդին Աս-  
տուծոյ ո . և Հայր է որ ամենայն ուրէք  
յայտնէ զորդին իւր :

## ԲԱՅ ԵՐԿՐՈՐԴ

Ասէ Ամիկաթն, ընդ Պետրոս միայն  
ասաց Քրիստոս, թէ և Տաց քեզ զփա-  
կանս արբայութեան երկնից. և զոր մի-  
անգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կա-  
պեալ յերկինս, և զոր արձակիցես յերկ-  
րի՝ եղիցի արձակեալ յերկինս ։

Պատասխանի ետու և ասեմ, Եթէ  
խոստացաւ միայն յայսմ վայրի, և ոչ  
ետ զիշխանութիւնն Քրիստոս. քանզի  
ոչ ասաց թէ առ կամ ընկալ, այլ Եթէ  
տաց քեզ. Տեսանե՞ս Եթէ որպէս առ  
յապա ցուցանէ զտալն։

Իսկ Եթէ ետ անդէ՞ն՝ ասացէք Եթէ  
զի՞նչ տուեալն, որով պարծիք ՚ի վե-  
րայ մեր, զի աստ զփականս միայն յի-  
շէ՝ Եթէ խոստացաւ և Եթէ ետ. և ըն-  
մեծադոյնն որ է բանալն՝ ոչ յաւելու.  
և զի՞նչ փառք էր Պետրոսի փականքն  
միայն առանց բանալոյ ուր և փարիսե-  
ցւոցն զնոյնն ասաց ունել Փրկիչն։

«Վ այ ձեզ՝ ասէ, փարիսեցւոց և  
գպրաց զի փակէք զարբայութիւն երկ-  
նից. գուք ոչ մտանէք՝ և որք մտանենն,  
արգելուք ։ Իսկ բանս այս միայն է՝ որ  
յատկանայ առ Պետրոսի, և այսու որպէ-

մեծացուցանել կարծէիք, նու աստացուցիք: Իսկ եթէ զկապելն և զարձակելն ասէք՝ որ է ճշմարիտ և բարձրագոյն իշխանութիւն, զայս ոչ միայն Պետրոսի՝ այլ և մետասանիցն խռոտացաւ: յորժամ պատուէր տայլը նոցա՝ և թէ մեղիցէ քեզ եղբայրն քո՝ երթ յանդիմանեալ զնա միայն: և յանլուր լինելն և յերկրորդումն ասա՛ յեկեղեցւոջ: և թէ նոցա ևս ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսան: ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս: և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս ա: ահա և յայսմ մասին հասարակ երեւեցան երկոտասանիքն: և որպէս ոչ կամեցաւ հայր զրկել Պետրոսի անդ ՚ի դաւանութեանն, նոյնպէս աստ Որդի զմետասանսն ՚ի խռոտմանէն: և զի խռոտումն այն որ էր միայն Պետրոսի: և այս՝ որ երկոտասանիցն հասարակ, նոյն ինքն Պետրոս յայտնէ հարցանելով զբրիստոս՝ և Տէր քանիցս անդամ թէ մեղիցէ ինձ եղբայրն իմ՝ թողից նմա ա: Տէսանէք զի դեռևս ոչ են առեալ զիշխանութիւն, վասն այսորիկ իբրև զանձանօթ սահմանի իշխանութեանն հարցանէ:

Վահ Ավետիսն, եթէ այսորիկ խոսս  
մաւենք են, առա ուր են տուրքն միթէ  
ստէ՞ Քրիստոս։ Եւ ասեմ, ոչ ստէ Տը-  
մարտութիւնն, այլ յետ յարութեանն  
յորժամ առաքէր զնոսա ետ հասարակ  
զկատարեալ իշխանութիւնն Հոգւովին  
սրբով։ « Յերեկոյի միաշաբաթուն  
յորժամ եմուտ Յիսուս դրօքն միակե-  
լովք՝ ուր եին աշակերտքն ժողովնեալ,  
Եկաց ՚ի մեջ նոցա և ասէ . ողջոյն ընդ  
ձեզ . և կրկնեալ զողջոյնն՝ ասէ ցնոսա  
սրակէս առաքեաց զիս Հոյր՝ և ևս ա-  
ռաքեմ զձեզ . և զայս իբրեւ ասաց փր-  
չեաց ՚ի նոսա և ասէ՝ առելք Հոգի սուրբ.  
Եթէ զուրուք թողուցուք զմեզս, թո-  
ղեալ լիցի, և եթէ զուրուք ունիցիք՝  
կալեալ լիցի ։

Տեսանեք՝ թէ սրակէս զանազանին  
խոստմաւեքն ՚ի պարզեացս . զի անդ ա-  
սէ՝ թէ զոր կասլեսցես, և աստ թէ զո-  
ւոց թողուցուք և ունիցիք .

### Այլ Պատմութանի :

Դարձեալ յորժամ հարցին աշա-  
կերաքն զՏէր յառակ սերմանացանին .  
թէ « Ենգիբ առակօք խօսիս ընդ նոսա-  
ասէ ցնոսա, ձեզ տռեալ է գիտել ըզ

խորհուրդ ու արքայութեան Երկնից ։ և զուկաս ասէ թէ և Վմբարձ զաշս իւր յաշակերտան և ասէ . Երանին է աղքատացդ հոգւով, զի ձեւը է արքայութին Երկնից ։ Վրդ Եթէ զանձառիցն և ըզներքսագունից խորհրդոցն զիշխանութիւն ետ գիտել, որ իւր է և իւրոցն միայն՝ ըստ գրեցելումն թէ և խորհուրդիմ ինձ և իմոցն ։ , զիա՞րդ զարտաքին և որ դրանն՝ յաշաղէր տալ մետասանիցըն . Աչ դարձեալ թէ զբովանդակ անընթիւն արքայութեանն ետ Երկուստասանիցն, զիա՞րդ զփոքրագոյն իշխանութիւն գրանն ոչ հաւատայր ՚ի նոսա . և եթէ իւրոց է՝ որպէս և ետ, զիա՞րդ ոչ ունին իշխանութիւն յիւրեանց տէրութեն . Վհացուցաւ մեծագունիւն թէ ունին և զփոքրագոյնն ։ Աչ այժմ տեսցուք, թէ զինչէ բանալի արքայութեանն Երկնից, և կամ ում ետ . զի մի և մեք վըրիպետ ՚ի ստուգութենէ բանին, ըստ այլոց աղդաց ընդունայն լիցի և մերն պարձանիք :

Վրդ՝ որպէս դատոք ՚ի Քրիստոսէ աւանդեալ, առաջին բանալի է մկրտութիւնն, որպէս ասէ Յիսուս առ Նիկողիմոս ։ Ամէ ոք ոչ ձնցի վերսափին ՚ի

ջրոյ և 'ի հոդւոյ . ոչ կարե՛ մտանել յար .  
քայլութիւնն երկնից ո որոյ և ետ իւ  
խանութիւն :

Եւ երկրորդ՝ կատարումն կամացն  
Հօր . որպէս առէ դարձեալ Տէր , “ Եթէ  
ոչ ամենայն , որ առէ ցիս տէր տէր՝ մըս  
ցէ յարբայութիւնն երկնից , այլ որ ա  
րացէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է ու .

Եւ Եթէ զի՞նչ են կամքն Հօր , նոյն  
ինքն Որդին ուսուցանէ և առէ “ Ոչ են  
կամք Հօր իմոյ Եթէ կորիցէ մի ոք ՚ի նո  
ցանէ ո , ըստ օրինակի դտելոյ ոչխարին  
միայ ՚ի հարիւրիցն մոլորեցելոյն , և առայ  
իշխանութիւն նոցա : Եթէ մեղիցէ ա  
ռէ եղբայրն քո , Երթ յանդիման կաց  
զմեղս նորա դու միայն՝ Եթէ լուիցէ  
քեզ գալով ՚ի խոստովանութիւն առաջ  
խարութեանն , շտհեցար զեղբայրն .  
լոյծ ՚ի ժամանակի զապաշխարութեան  
կապանս , և ընդարձակեա նմա զեկեղէ .  
ցի և զկենարարն խորհուրդ . որ է առ  
հաւատչեայ արքայութեանն երկնից .  
իսկ Եթէ յամառեալ հրաժարէ , յետ  
կըկնակի և երրորդի յանդիմանութեան  
Եղիցի քեզ իբրեւ զհեթանոսս . կապեա  
զեա արտաքոյ և կեզեցական խորհրդոցն  
որ և յերկինս զեայն ունի կապանս ըստ

անսուտ բանին Տեառն :

Արդ՝ ընկալեալ երկոտասանիցն ըդ  
կատարեալ իշխանութիւնս զայսոսիկ ՚ի  
Քրիստոսէ և ոչ ՚ի Պետրոսէ, և սփռեալք  
յիւրաքանչիւր վիճակս հաստատեցին ա-  
թուս ինքեանց, անշարժ ՚ի գրանց Դը-  
ժօնոց ըստ բանին Տեառն . և բաշխե-  
ցին զիշխանութիւնս զայս աշակերտե-  
լոցն ձրի, որպէս և ընկալանն ըստ բա-  
նին Քրիստոսի : Եւ այս յայտնի է յայս-  
մանէ՝ որ այժմս կատարի յեկեղեցի խոր-  
հուրդ մկրտութեան, և խոստովանու-  
թեամբ և աղաշխարութեամբ մոքքու-  
թիւնն ՚ի Քրիստոսէ աղքիւրացեալ, ոչ  
՚ի ձեռն Պետրոսի ՚ի մետասանսն՝ և ա-  
պա նոքօք ՚ի մեղ, այլ ՚ի Քրիստոսէ հա-  
սարակ յերկոտասասանսն, և ՚ի ձեռն նո-  
ցա յիւրաքանչիւրոցն վիճակս . վասն ո-  
րոյ ոչ կարօտանամբ եկեղեցւոյն ձռով-  
մայ, զի ունիմք զիշխողսն մեր ՚ի Տեառ-  
նէ առաքեալ հաւասար ձեղ . արդ ուր  
են պարծանքն ձեր որ ոչ է ՚ի կամացն  
Պետրոսի :

## ԲԱՅ ԵՐԵՎԱՆԻ

Ասէ Նիկաթն՝ ոչ ասաց Տէրն, և Այս  
մոն դու երբեմն դարձցիս՝ և հաստա-  
տեցես զեղբարս քո ու և զի՞նչ ևս զե-  
րագոյն իշխանութիւն քան զայս :

Պատասխանի, արդ հաստատելն զոք  
չէ՝ քան թէ յետ գլորման իրիք, և նաին  
հարցանեմք զձեզ՝ եթէ ուր գլորեցան  
մետասաներն յետ ընդունելոյն զհոդին  
սուրբ, զի հաստատեաց զնոսա Պետ-  
րոս. ցուցեք յառաքելական մատեանցն  
և հաւանիմք ձեզ. և այժմ ոքք ՚ի նո-  
ցին սակի եմք այլ հարկեցուցանեք ըդ-  
մեզ անզգամիլ բայց ոչ եղեց անզգամ  
քանզի զարդարն խօսիմ. գիտեմք ըդ-  
Պետրոս միայն գայթակղեալ յետ յա-  
րութեան Տեառն, որպէս ասէ Պօղոս  
առ Գրադատացիսն, եթէ և Շնդ հեթա-  
նոսս ուտէր անխոտիր. իսկ իրքեւ եկին  
ոմանք առ ՚ի Յակոբայ՝ երկուցեալ զա-  
տաներ մինչեւ կեղծաւորեցան ընդ նմա-  
ն այլք, և Բառնաբաս անդամ, և իր-  
քեւ աեսի ասէ՝ թէ ոչ ուղիղ գնան ՚ի  
Ճշմարտութիւն աւետարանին, ասեմ  
ցկե վաս առաջի ամենեցուն ո :

Տեսանեք զդթելն Պետրոսի և շնա-

տառելն՝ ՚ի Պօղոսէ, և ոչ զայլօն՝ ՚ի նմանէ :

Ով եղբարք, հաստատելն՝ ՚ի բազում մարտանի յեղանակս . բայց մեք զերիսս զայս առնլով՝ ՚ի մէջ, տեսցուք թէ ըստ որում յեղանակի հաստատէ զմետառանը որն Պետրոս ըստ բանի Տետրն : Երդ հաստատելն՝ զայլս կամ ընդհանուր է, կամ մասնական . որ է իշխանական կամ յօրինակ լինել անձամբ . և ոչ սիրելով՝ ըստ Պետրոսի . և զի հաւատարիմ բանս լիցի ՚ի գրոց ցուցցուք :

Եւ արդ՝ ընդհանուր հաստատութիւն է, յետ ընդհանուր գայթակղելոյն և թերութեանն ՚ի հաւատոց . որպէս և դրէ ընդհանուր Պօղոս առ Կորընթացիսն և Եյսւհետեւ եղբարք իմ սիրելիք հաստատուն եղերուք, անշարժ կացէք . առաւել լերուք ՚ի գործս Տեառնոն, և դարձեալ՝ և Նոկեցէք հաստատուն կացէք ՚ի հաւատոս ։

Իսկ մասնաւոր, յորժամմի օք մեզիցէ . որպէս Կորնթացի մեզուցելոյն, զոր յետ ջերմեռանդն ապաշխարութեան հաստատէ զիտ դրելով՝ Շատ է, առէ՝ այնպիսուայն պատուհանն այն . աղաւեմ զձեզ այսուհետեւ հաստատել ՚ի նազուրն ։, և կամ զոր առ Գալատացիսն՝

“ Եթե ոք ըստոնիցի յինչ և իցէ յանցանս, դուք ոք հոգեորբդ էք, հաստատեցէք զայնպիսին հոգւով հեղութք ։ Արդ ըստ երկուց յեղանակացս այսոցիկ, ոչ ուրեք առի հաստատել Պետրոսի ըղմետասանսն, ոք է իշխանական ։ և դուք ոչ կարեք ցուցանել զի և ոչ յանցանք ինչ յիշխատակի նոցա կամ ընդհանուր կամ մասնաւոր՝ յետ ընդունելոյն զհոգին սուրբ ։

Ապա ըստ երրորդ յեղանակիս ասեմք, ոք է օրինակաւ և ոչ իշխանութեամբ, որպէս դարձեալ ասէ առ Գաղատացի սըն՝ թէ և Ա ասն սպրդողաց սուտ եղբարց՝ որք սպրդեցին մտանել դիտել զաղատութիւնն մեր, զոր ունիմք ՚ի Քըրիստոս Յիսուս ։ զի զմեղ ծառայեցուացեն, որոց ոչ առժամանակմի անսացաք հնազանդութեան ։ զի ճշմարտութիւն աւետարանին հաստատեսցի ՚ի ձեզ ։ զոր արար և Պետրոս սպրդողաց սուտ եղբարցն, որք ասացին յայնմ գիշերի յորում յատեան ածաւ Տէրն, թէ և Եւ դու ՚ի նոցանել ես, նա ուրացաւ՝ թէ ոչ ոչ ։ և զի կամեցան իսպաւ ծառայեցուցանել ուրացութեան, կրկնեցին և երեքինեցին ։ և իսկոյն հաւ խօսեցաւ.

և յիշեալ զբանն Տեսո՞ն՝ ոչ առ ժամանակի մի անսաց ուրացութեան . Ելեալ ելաց դառնապէս և հաստատեաց զնուաս ՚ի բանէ աւետարանին՝ զոր ասաց Տէր թէ և Արմոն Սիմոն ահա սատանայ խնդրեաց խարբալել զձեզ իբրև զցորեան . այլ ես աղաչեցի վասն քո զի մի պակասեացին հաւատք քո :

### Այլ դադարինեն :

Վաց Տէր ցերկոտասանսն, թէ աչայ-  
օրմ գիշերի դուք ամենեքեան գայթակ-  
ղելոց էք յինէն . և Պետրոս յուրաստ-  
եղե և ասէ՝ թէ և ամենեքեան գայ-  
թակղեացին՝ սակայն ես ոչ . և նա ասէ,  
և դու երիցս ուրացիս զիս ո, որպէս  
և եղեն : Իսկ յորժամտեսին մետասան-  
քըն՝ եթէ գարձաւ Պետրոս, և ընկա-  
լաւ զնա Տէր՝ որ զմեծագոյնն յանցեաւ,  
հաստատեցան ՚ի հաւատս թէ ընդու-  
նի և զմեզ՝ անտես առնելով և զմերն  
գայթակղութիւն : Ով եզրարը այսպէս  
է հաստատելն Պետրոսի զեղբարսն՝ զոր  
ասաց Տէր . և ոչ ըստ կարծեաց ձերոց  
իշխանութեամբ :

Վոէ Տէր և Դու գարձցիս և հաստ-  
ատեցես զեղբարս քո : Եղբարք կոչե-

նորտ բառ մարմեց զիսրայէլ, զօր հաս-  
տառեաց բանիւ աւետարանին քար-  
զութեան. որոյ և վկայէ որ Քրիստոսի  
ւըն խօսէր թէ « Որ յաջողեացն զետ-  
րոսի յառաքելութիւն թշփառութեան  
յաջողեաց և ինձ ՚ի հեթանոս » :

### Ա. ՅԼ Կ-ԴԱ-Խ-ԱՆԻ :

Վաել զաւազանաւն կոչեալ եղբար-  
սըն հաստատէ՝ և այն կրկնակի . նախ  
ապաշխարութեան օրինակաւ, զի և մեք  
հաստատեալ եմք ՚ի հաւատս՝ թէ ըստ  
նմա և մեք գտանեմք զթողութիւն մե-  
զաց ապաշխարութեամք . երկրորդ ՚ի  
ձեռն ընդհանրական թղթոցն վարդա-  
պետութեան :

### Ա. ՅԼ Կ-ԴԱ-Խ-ԱՆԻ :

« Օ ի զու ասէ Տէր դարձցիս և հաս-  
տառեացես զեղբարս քո ո զօրս ցուցաբ-  
ե ոչ ասաց թէ հաստատեացես զհա-  
ստապն սրբոց, վասն զի հաստատողք  
են և մետասանքն հանգոյն զետրոսի  
որպէս վկայէ Պօղոս՝ որ Քրիստոսիւն խօ-  
սէր առ Եփեսացիսն թէ « Վա եդ զո-  
մանս մարդարէս և աւետարանիչո ՚ի  
հաստատութիւն որբոց, ՚ի գործ պաշտա-

ման, 'ի շինուած մարմնոյն քրիստոսի ո:

Տեսանելք՝ թէ որպէս յամենայնի ան-  
զիրկ պահէ զերկատասանն ՚ի հասարակ  
իշխանութենէն, վասն որոյ և ոչ կարօ-  
տանամբ այլում հաստատողի զմերն ու-  
նելով հաստատողս :

---

## ԲԵՐ ՉՈՐՏՈՒԴԻ

Ասէ Լիկալմն՝ վասն Պետրոսի ասէ-  
աւետարանադիրն թէ և չայեցեալ ընդ-  
նա Յիսուսի՝ ասէ, գու կոչեսցիս Կե-  
փասո, և Յովհաննէս յունարէն գրեալ  
զաւետարանն՝ Կեփալ ասաց որ է դը-  
լուխ, և նախախնամութին ոչ ետ թոյլ  
թարգմանել զրանս զայս յայլ լեզու,  
այլ նովին բառիւն պահեաց ցայժմ. զի  
ցուցցէ այսու գլուխ Պետրոս, Եւ ըշ-  
կեփասն՝ որ թարգմանի Պետրոս, ոչ յի-  
շէր :

Պատասխանի . և արդ ավ գուք,  
պարծանքս այս յոյժ է փցուն, և անտա-  
րակցս : Լախ՝ զի որ գրեացն նա ասաց  
թէ ա՛յու կոչեսցիս Կեփաս՝ և թարգմա-  
նեաց զնա Պետրոս ո, և ՚ի Յունաց աւե-  
տարանսն ցայժմ սցաղէս է գրեալ. զի

ընթերցեալ այսպէս լուաք, և ՚ի հմտա  
գունից արանց հարցեալ այսպէս ասա  
ցին. որպէս և գրեալն էր :

Ա. Ա. Պատմականի :

Եւ արդ զի այսպէս է գրեալ, ասա  
ցէք յազագս որոց սլիտոյից՝ ասաց ըդ-  
կեփալն, թէ թարդմանի Պետրոս. Պետ-  
րոսն յունարէն է և այս ոչ էր բնաւ  
սլիտոյ. իսկ եթէ ասիցէք, թէ կեփալ  
՚ի կեփալ ասաց թարդմանել, նա և այս  
անմոռութիւն՝ զդլուխ ՚ի գլուխ թարդ-  
մանելն ՚ի մի և ՚ի նոյն բարբառ, զոր  
մեզ ոլարտ էր առնել զայս՝ որ թարդ-  
մանեցաք ՚ի մեր լեզուս :

Եւ դարձեալ՝ եթէ Յովհաննէս ՚ի  
Տեառնէ գլուխ լուաւ և քար թարդ-  
մանեաց, այս ոչ միայն յիմարութիւն  
այլ և ստութիւն և թերութիւն մու-  
ծանէ յաւետարանն, և անհաստատ ցու-  
ցանէ զբոլորն՝ զոր մի լիցի :

Իսկ եթէ զօր լուաւն կեփասս Եբրայե-  
ցերէն, և ասաց թէ՝ որ թարդմանի յու-  
նարէն Պետրոս որպէս և գրեալէ ՚ի նո-  
ցայն և ՚ի ձերդ՝ և յամենայն ազգաց ա-  
ւետարանն. ընդէր զբարբարէք զՃշմար-  
առութիւնն, և ասացիք նախախնամու-

թեանն պահել զբանն . զի՞նչ առաւելութիւն ունի յունարէն կեփալն՝ 'ի վերայ գլխոյն հայերէն . ոչ զմի և զնոյն նշանակեն իր . ահա ընդվայր մտածուի :

Իսկ թէսլէտ և տամբ ըստ ձեզ գըլուիս գոլ ասացեալ , ասացէք ումէ է գլուխ . զի ամենայն գլուխս անձին է գըլուխ , և որ ասացն՝ ըստ ձեզ զանձն ոչ ցուցանէ , որպէս և յարածեաւ ասելի զոշխարսն . և զի ոչ է անձն՝ ապա և ոչ գլուխ , որպէս ձեզ թուի . և ընդէք ստուերամարտ լինիք զօդ հարկանելով կարծէք յաղթկու լինել զոր ոչն տեսէք .

---

## ԲԱՅ ՀԵՎԴԵԲՈՒԴ

Առէ Կիկաթն , ընդ Պետրոս միայն ասաց Տէր՝ թէ և Արածեաւ զոշխարս իմ . և զայս անլուծանելի ասեն գոլ նշանակ իշխանութեան :

Պատասխանի . նախ տեսցուք թէ այլ բան համազօր այսմբանի գոյ յաւետարանս՝ թէ ոչ . և թէ այլ ինչ նշանակէ արածելն քան զաշակերտելն . և զի ոչ այլ ինչ ցուցանէ՝ վկայէ Եղեկիէլ որպէս 'ի դիմաց Աստուծոյ , թէսլէտ և

՚ի հակառակէն . « Այսպէս ասէ Տէր՝  
ո՞ հովիւք Խորացէլի . միթէ հովիւք զան  
ձինս արածեն , ոչ հովիւք զոշխարսն ա-  
րածեն , արդ ահաւաղիկ զգէրսն զէ-  
նէք՝ զասրն զգենուք և ուտէք զկաթնն ,  
և զխաշինս իմ ոչ արածէք ո . որպէս և  
այժմ , և ոչ ոք է՝ որ յանդիմանէ , Արդ  
եթէ յայտ եղեւ թէ նոյն է արածելն և  
աշակերտելն , ապա ոչ է տեսանել մեղ  
միսյն զբառիցն զանազանութիւն , այլ  
զմուացն դիտաւորութիւն . քանզի սովո-  
րութիւն է Փրկչին զմի և զնոյն իր բազ-  
մաղան բառիւք նշանակել՝ որպէս զար-  
քայութին երկնից ուռկանիւ և զան-  
ձիւ և մանանեխիւ , այսպէս և զքա-  
րողութիւն աւետարանին , զոր աստ ա-  
րածեա զոշխարսն ասայ՝ այլուր հուն-  
ձըս կոչեաց , և հարսանեաց նմանեցցց  
պատրաստութեան . և ՚ի Հօրէ և յիւր-  
մէ ասաց հանել և առաքել զմշակսն և  
զծառայսն . և ոչ մշակ մի և ծառայ որ-  
պէս ձեզդ թռւի , այլ հասարակ զերկա-  
տասանսն . ժողովել զորայն և ածել՚ի  
հրապարակացն զկուրացեալսն յիսկա-  
պէսն լուսոյ՝ ՚ի լոյս դիտութեան ձը-  
մարտութեան որպէս և եին կոչեցեալ  
լոյս աշխարհի :

ԱՅԼ ԴԱՄԱԼԵՆԻ :

Դարձեալ աեսցուք, թէ զի՞նչ արօ-  
սըն իցէ . զի մի զհսաանուտս զայս կար-  
ծեսցուք և զգալապէս զարածելն . և ե-  
թէ այլ ոք իցէ յայսմ արօտի արածող՝  
թէ զետրոս միայն : Եւ արդ՝ է արօտն  
ըստ ինքեան կերակուք . և եթէ կերա-  
կուք, յայտէ՝ թէ զանազաննեալէ ըստ  
կերազացն . որպէս անբանիցն է զգալին  
խռո՞ այսպէս և բանաւորացս բանն  
Աստուծոյ և իմաստութիւն . որպէս ա-  
սէ սուրբն Դաւիթ յեօթանասներորդ  
եօթներորդ Սաղմոսին, թէ և Հովուէր  
զիարացէլ, և արածէր զնոսա իմաստու-  
թեամբ սրտի՝ և անմեղութեամբ ձե-  
ռաց առաջնորդէր նոցա ո , և Տէրն՝  
թէ և Ոչ հայիւ միայն կեցցէ մարդ,  
այլ ամենայն բանիւն Աստուծոյ ո : Երդ՝  
զբանն իւր բանն Աստուած ոչ միայն  
Պէտրոսի ետ, այլ և ընկերացն նորա  
հասարակ ՚ի Գրալիլեա՝ ուր Ժամադիրն  
եղեւ աեսանել զնոսա . որպէս և գրեա-  
լնէ, իրբեւ եակս զնոսա՝ ասէ և Դնա-  
ցէք սյսուհետեւ աշակերտեցէք զամե-  
նայն հեթանոսո . ուսուցէք նոցա զրա-  
նըն իմ զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի  
ձեզ, և թէ և Հոգին սուրբ եկեալ ու-

սուսցե և յիշեցուսցե ձեզ զբանն իմ ։  
Եւ զիմաստութիւն ետ և ասէ յհրեաց  
որն՝ « Առաքեցից ՚ի ձեզ իմաստունս զը-  
րըս սպանանիցէք ։ Եւ Պօղոս, թէ « Այեք  
քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս՝ որ  
պէս հրեիցն գայթակղութիւն, այսպէս  
նոցին կոչեցելոցն՝ զՔրիստոս Աստուծոյ  
զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն։  
Եւ զի արօտ է քարոզութիւն, նոյն ինքն  
ցուցանէ Պօղոս՝ « Տղայաբարոյիցն կա-  
թըն ասէ ջամրեցի, իսկ կրթեցելոցն  
ճաշակելեօք հաստատուն կերակուր ։

Տեսանէք, թէ որպէս հասարակ ցու-  
ցան արածող ։ զի զօր անդ արօտ ասաց  
Քրիստոս զաւետարանն՝ որ Քրիստոսիւն  
խօսէք, ջամբումն և կերակուր ասէ։

### Ե. յլ Պատմութանի :

Վկ տեաբք, ահա և ոչ յայսմ մասին  
զրկէ Տէրն զմետասանան ։ զի ասաց թէ  
« Արածեա զոշխարսն ո և ոչ զհովիւսն .  
վասն զի հովիւք են և այլ համակարգքն  
նորա աշակերտքն և արածող նման նը-  
մա, վկայէ Պօղոս առ Եփեսացիսն և ա-  
սէ՝ « Ա, ա եղ զոմանս աւետարանիչս, դ-  
մանս հովիւս և վարդապետս ։ »

Տեսանէք՝ թէ որպէս յայտնեաց թէ

ու այլ ինչ է հովուելն և արածելն , քան  
զմարդապետելն . և անզանաղան եցոյց  
որպէս յամենայնի , և յայսմ զերկոտա-  
սանս . իսկ յօթ արօտ առեք արածել  
զետրոսի զբանաւոր ոչխարսն Քրիստո-  
սի , ցուցեք զբարձրագոյնն քան զմե-  
տասանիցն որով պարծիքդ . իսկ եթէ  
ոչ կարեք ցուցանել այլ քանզի ոչ գոյ  
այլ աւետարան , դուք ինքնին վկայեք  
թէ մի և նոյն են իշխանութեամբ . կնքէ  
անխախտելի որդին Աստուծոյ Հարբ ըշ-  
մութիւն իշխանութեան նոցա , ասե-  
լով և Հայր Եղիցին և սոքա մի , որպէս  
և մեք մի եմք ո : Երդ Եթէ ըստ Հօր և  
Որդւոյ Հաւասար ունին զպետութիւն  
երկոտասանիքն ըստ Տեառն քանին . յոյժ  
է յանդգնութիւն մուծանել ՚ի նոսա  
առաւելութիւն և նուազութիւն . զի  
այն ՚ի Հայր և յորդի վերաբերի . և զա-  
րիսսին ախտանան մօլութիւն զանխլա-  
բար այնպիսուոյն խորհօղքն :

### Ա. ՅԼ Կ-Դ-Ի-Ն :

Եւ զի ասաց , արածեա զոշխարս իմ .  
Հաւատայ յատուել զառաքելութի թը-  
փատութեանն Պետրոսի , իւր կոչելով  
ոչխարս . ըստ այնմ թէ և Ու ուրեք ա-

ու որեցայ , և թէ ոչ առ ոչխարս կորու-  
սեալս տանն իսրայէլի ո , և թէ և յիւրան  
եկն ո . որպէս Պօղոս վկայէ առ գաղա-  
տացիս զյատկութին , թէ և իրրե տեսին  
կարծեալ սիւնքն՝ թէ հաւատացեալէ  
ինձ աւետարանն անթլիատութէ , որ  
պէս Պետրոսի թլիատութէն ո . և արդ  
ուր հաւատացաւ թէ ոչ յայսմ վայրի ,  
ցուցէք՝ զի ոչ ստէ վկայն ճշմարիտ :

Իսկ եթէ ասիցէք՝ թէ հեթանոսք ոչ  
են ոչխարք Քրիստոսի . թէ այսպէս ի-  
ցէ , ապա զո՞լ արածեն մետառանքն . ա-  
ռեմք թէ՝ այն և հեթանոսք , զի զնուա-  
կոչեաց ասելով և ՚իտ և այլ և ոչխարք  
են իմ , որ ոչ են յայսմ դաւթէ , և զայն  
և ալարտ է ինձ ածել այսր . և եղիցին  
մի հօտ և մի հովիւն . և Պօղոս վկայէ թէ  
և Շիր խոփր ոչ հրէի և ոչ հեթանոսի .  
զի ամենեքին դուք մի էք ՚ի Քրիստոս  
Յիսուս ” . Տեսանէք՝ թէ որպէս ցու-  
ցաւ ըստ միութեան ոչխարտցն՝ մի իւ-  
խանութիւն արածողայն :

## ԲՈՅ ՎԵՑԵՐԱՐԴ

Առ Ակամյն, ոչ և այս մեծութիւն նորա՝ զի զմահն նշանակեաց Քրիստոս. ասէ և Հորժամծերացիս՝ ձեռք ՚ի վեր կալցես՝ և այլք ածցեն քեզ գոտի, և տանիցեն զբեզ՝ ուր ոչն կամիցիս. նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած դ:

Պատասխանի. Նախ զի յազագս երկոտասանիցն իշխանութեան անզանազանութեան է առաջարկութիւնս մեր, և ոչ մահու որպիսութեան. զի մահն ոչ եթէ հաստատութիւն տէրութեան է, այլ ՚ի բաց բարձումն կենաց և իշխանութեան. զի յետ ելիցն ոչ ու մեք իշխէ, և ոչինչ ունի դիտաւորութիւն այս ՚ի բանս մեք:

## Ե. յլ պատասխան:

Իսկ եթէ մեծութիւն թուի ձեզ. ապա ոչ ինչ նուազ երե ին յայսմ մասին և մետասանքն վասն նոյն գունակ նշանակելոյն և զնոցայն մահ՝ ըստ գրեցելումն, թէ և Վհաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոշխարս ՚ի մէջ գայլոց ։ և թէ և Վհաւեացեն զձեզ յատեանս

և 'ի Ժողովուրդս տանջիցեն և 'ի խաչ  
հանիցեն զձեզ՝ և սպանանիցեն ո, և թէ  
և Որ սպանանիցեն զձեզ՝ համարիցին  
պաշտօն մատուցանել Աստուծոյո, և թէ  
և Ո՞ի Երկնշիք յայնցանէ որ սպանանեն  
զմարմին ո: Եւ արդ զբնչ ասէք, միթէ  
ոչ են մահու նշանակիք այսոքիկ: Եւ ոչ  
վասն տանջանացն զանազանութեան ա  
սէ՝ զորով փառաւորելն զԱստուած. զի  
բազմազանքն զմի և զնոյն ունին կա-  
տարած, զմարմնոյն միայն մեռանին,  
որպէս ասաց Տէր: Այլ վասն մահուն  
որպիսութեան, որ է Ելք՝ բանզի յեր-  
կուս բաժանի մահ մարդոյ. 'ի չար և 'ի  
պատուական. որպէս ասէ մարդարէն  
Դաւիթ յերեսներորդ երրորդ Սաղմո-  
սին, թէ և Ո՞ահ մեղաւորին չար է ո.  
և 'ի հարիւրերորդ տասներորդ հինգե-  
րորդ Սաղմոսին, թէ և Պատուական է  
առաջի Տեառն մահ սրբոց իւրոց ո. վա-  
սըն որոյ 'ի բաց հանէ 'ի նմանէ զշար  
մահուն երկիւղ և ասէ, պատուական  
մահուամբն մեռանիլ որով փառաւորի  
Աստուած: Եւ զի յատուկ ասէ ցՊետ-  
րոս՝ հաստատէ զնա վասն զիւրափափոխ  
գոլոյ բարուցն. որպէս 'ի Ժամ չարչարա-  
նացն՝ Եթէ 'ի խնդրելն սատանայի, Ես

աղաւեցի վասն քո . և զայս ոչ ոք յան-  
դընի ասել , թէ մետասանքն ոչ փա-  
ռաւորեցին զԱստուած մահուամբ . և  
զի մի են ելք նոցա՝ միապէս և զմբցա-  
նակն խստացաւ նոցա Տէրն . « Դուք  
ասէ , որ եկեք զկնի իմ՝ ի միւսանգամ  
գալստեանն յորժամ նստցիմ յաթոռ  
փռաց իմաց , նստջիք և դուք յերկոտա-  
ռան աթոռս դոտել զիսրայէլո . որ է  
բանս այս զօդ կատարման անզանազա-  
նութեան նոցա . որպէս անդ՝ ըստ այ-  
նըմ և աստ , և եթէ ոչ անդ՝ և ոչ աստ ,  
և բոլորն բարձաւ ձերդ իշխանութիւն-  
առելով զՃշմարտութիւնն :

### ԲԵՆ ԵՇՈԹՆԵՐՈՒՐԴԻ

Ի սէ ւիկաթն , ոչ ահա մեծի իշխա-  
նութեան ցոյցք է որ պատմի ՚ի գործս  
առաքելոցն , թէ և Յաւուրսն յայնոսիկ  
յարուցեալ զիտրոս ՚ի մէջ և զբարցն ,  
ասէ . արբ եզրարբ պարտ է կատարել  
դրսի վասն Յուդայի , որ հասեալ էր  
նմա վիճակ պաշտամանս մեր . սա ու-  
ռացեալ հերձաւ . արդ պարտ է յա-  
րանցս որ ընդ մեզս են , վկայ յարու-

Եւանն քրիստոսի լինելընդ մեզ :

Պատասխանի . բարեկ իմաստութենդ  
ձեր . զի զկատարելապէս հաւասարու-  
թեան զյայտնութիւնն ոչ իմանայք , զի  
վիրատն տալ իբր ՚ի մեծութիւն յիշէք  
զնորա , և զոչն կարել ձեռնադրել յաս-  
տիճան երկոտասանիցն զոք վասն համա-  
կարգութեանն՝ ոչ ածէք զմռաւ : Օյ  
այս է իշխանին յառաջ ածել զընարեալ-  
սըն՝ յորոց տուեալն է ՚ի Տետոնէ ընդ  
իւրով իշխանութեամբ , և ասպա իշ-  
խել իւրոց վիճակելոցն . զոր ոչ ընկա-  
լեալ ՚ի վերայ մետասանիցն , որպէս ին-  
քըն ցուցանէ յԱստուած վերաբերելով  
զընարութիւնն ըստ ինքեանց ՚ի Տետո-  
նէ , և ՚ի Հոգին սուրբ զջորութիւն ըն-  
դունելութեան , այլ և զայս ոչ կարեք  
ասել թէ ոչ ուներ իշխանութիւն ձեռ-  
նադրութեան , զի թէ ոչ զետրոս և ո՞-  
այլ ոք . բայց որոց տուաւն՝ զոր այժմդ  
ունիք . Իսկ Եթէ ասիցէք անկատար գոլ-  
թեպէտյետ յարութեանն վասն չեւ ևս  
ընդունելոյ զՀոգին սուրբ , ապա զի  
սղարծիք անկատարիւքն իբր կատարե-  
լովք . իսկ եթէ կատարեալ որպէս և  
երն , ընդէք ոչ խոստվանիք զհաւասա-  
րութիւնն :

Ա. Ա. Պատառիսնի :

Դարձեալ հարցանեմք վասն խրա-  
սն . ասոցէք՝ եթէ զի՞նչ նշանակէ իշ-  
խանութեան , որ և նու աստագունիցն  
պատհէ առ յօյժ բարձրագոյնսն , որ-  
պէս և ունիմք զսոյն 'ի գրաց ցուցանել  
յելցն . Արդ յորժամ եկն Յովթոր անե-  
րն Մովսէսի առ Մովսէս՝ և ետես ըդ-  
առազանս նորա 'ի բազում հոգոցն  
որ յամբոխէն , առէ ցՄովսէս , « Ոչ է ու-  
զի բանդ՝ զոր առնես , անհնարին տան-  
իանք է քեզ և ժաղովրդեանդ . ոչ կա-  
րես միայն առնել՝ ես տաց քեզ խրատ .  
Ար դու ժաղովրդեանդ առ 'ի յԱստու-  
ծոյ , և տարցես զբանս դոցա առ Առ-  
տուած . և գիցես դոցա վկացութիւն  
հրամանացն Աստուծոյ և զարտուիրա-  
նաց նորա . ընտրեալ արս Աստուածու-  
պաշտս որ հեռի իցեն յամբարտու-  
նութենէ , և կացուացես հազարապէտս  
մինչև ցտաննապէտս , և թեթե ասցի  
ի քէն և այլ և յոլովս : Խու լուաւ Մով-  
սէս ձայնի աներոյն , և արտք որպէս ա-  
սոց նմաս : Արդ մեծ տաես զՅովթոր  
քան զՄովսէս զաստուած կոչեցեալն 'ի  
ծեառնէ . զի և տարերը ոչ ելանէին ընդ  
հրամանս նորա . և զի՞նչ է զայս ասել առ-  
ծայրագոյնն իմաստութիւն՝ որ և եղեն :

Ի ԳՐԱ ԼԱՆԿԱ :

“ Ա Ասէ Տէր յՄովսէս , մինչև յԵրբ  
բարկացուցանէ զիս ժողովուրդդ . թոյլ  
տուր ինձ , զի հարից զդոսա մահուամբ .  
և ասէ Մովսէս . Տէր՝ իսկ արդ լուիցեն  
Եղիպատացիքն և ամենայն ժողովուրդ  
երկրիս , թէ դու Տէր՝ ՚ի ժողովորդեանս  
յայսմիկ ես . և սեամբ ամսոյ երթա  
դու առաջի դոցա ՚ի տուէ , և սեամբ  
հրոյ ՚ի գիշերի , և սաստակեցես զժռ  
զովուրդս զայս իբրև զայր մի՝ խօսես  
ցին ազգք . որ լուիցեն զքէն և ասիցեն .  
վասն զի ոչ կարէր Տէր տանել զժողո  
վուրդն զայն յերկիքն՝ զոր երդուաւ  
նոցա յանապատին . և ասէ Մովսէս , արդ  
բարձրասցի ձեռան քո Տէր , թող զմեզս  
սոցա ըստ մեծի ողորմութեան քում .  
որպէս ներեցեր դոցա յԵղիպատսէ մին  
չե յայժմ . և ասէ Տէր յՄովսէս՝ ներե-  
ցից դոցա ըստ բանի քում : Եւ արդ  
զի՞նչ ասէք առ այս , միթէ մեծ սմնէ  
Մովսէս քան զԱստուած , զի ետ Տեառն  
զիսրատս զայս , յորոց զբազու մն կարձե-  
ցաք վասն յերկարութե՞ : Ահա անվա-  
ւեր ցուցաւ և այս , և այն կրկնակի :

Համարած պատասխանի շորփցի բանից 'ի յէ մըմանցն' զորուց Տէր առանձնակի ցկեարուս . զորս կարծեն մեծութիւն գոյն . և նովաւ ինքեանց՝ հռովմացեցիք . զի և ինչ ոչ ոչ նմա . և նովաւ ինքեանց՝ հռովմաց նոցա՝ թէովեաւ և ուղարկի . Եւ համեմատութիւն ընդ դէ յ նոցին 'ի նուառացուցիւ ասացելոցն :

Խակ եթէ ասիցեն հռովմացեցիքն .  
Եթէ ոչ ետ կրկին իշխանութիւն Պետրոսի Քրիստոս՝ ընդ էր զմեծամեծ բանս զայսոսիկ բաց յընկերաց նորա ասէ ցնաւ .  
Ե՞ս որս ասասցուք նախ՝ թէ ոչ նորոդ ինչ ետ պարզեսս նմա , այլ 'ի տուեցելոցն հասարակաց՝ կրկինեաց առ նա . և այսոքիկ որք միտոս ունին , նու աստութեան և անհաստատ լինելոյ են ցոյցք նմա՝ և ոչ կրկին իշխանութեան և վեհագունութեան մետասանիցն , վասն անխախտ կալոյ մնալոյ 'ի տուեալ իշխանութիւնն նոցա 'ի Տեառնէ :

Խակ դուք բարձրացուցանողօքդ պարծիք . և զնուաստացուցանողօքն զանց առնէք , և զի ասաց թէ « 'Իու ես վէմո և զայլոն զմտու ածէք . և զոր ասաց թէ « սատանայ իմ ես ո և զնմանսն սորտ ոչ յիշէք , զի որ ասացն թէ « զու ես վէմ . և յայդը վերոյ շինեցից վեկեզեցի իմու

նա ասաց թէ « սպահաց ես իմ և  
գայթակղութիւն ես իմ» . և որ հրա-  
մացեաց թէ « Տաց քեզ զփական ար-  
քայութեան երկնից ո՞նցին ինքն բարբա-  
ռեցաւ թէ « ոչ խորհիս զԱստուծոյն այսինքն զարքայութեանն : Եւ որ խօ-  
սեցաւ առ նա թէ « դարձցիս և հաս-  
տառեցես զեզրարս քո ո՞նա կոչեաց  
զեա « թերահաւատ և երկմիտ ո : Եւ  
որ մակայտել երիցս թէ « Արածեա-  
զոշխարս իմո , նա գուշակեաց զնմանէ  
թէ « երիցս ուրասցիս դիս ո :


Տեսանէք՝ թէ որպէս համեմատեցան  
միմեանց կողմանքն երկոքեան , և այս-  
քիկ ասացան ՚ի նախախնամութենէն  
Աստուծոյ . զի մեծամեծքն դեռևս են  
՚ի հաստատութիւն վերստին՝ և ՚ի նորա-  
դումն նուաստացուցանողացն , և ՚ի հա-  
տումն երկուց մեծ ախտից՝ բարձրայո-  
նութեան և գայթակղութեան . զի դոք  
մի մեծովքն ամբարտաւանեսջիք , որպէս  
կրիդ ՚ի ձեզ՝ և այլք մի ներհակօք գայ-  
թակղեալք նուաստ համարեսցին զԳետ-  
րոս քան զընկերան :

Իսկ եթէ ասիցէք թէ , Աստուծու-  
անզեզ է ՚ի բարետրութիւն , և անյի-  
շոշար ՚ի սխալանս ՚ի զղջանալն . այս

վ որ ոչ հաւասար այսմ, և զիցի ունայն  
կլաւագոյն զօրութենէն. այլ եթէ ոչ  
էր արժան յիշել զնուաստադոյնսն յայ-  
ռմ վայրի՝ և ոչ արժան ընթեռնուլ  
յաւետարանսն :

Այդ հարկ է ձեզ կամ տրոհարկել  
ոչ ընթեռնուլ յեկեղեցի և մեղադրել  
հոգւոյն սրբոյ խօսողին զբանսս զայսո-  
րիկ և կամ արտաքս հանել ի գրացն : Իսկ  
եթէ այս անհնարէ, զի Հոգին սուրբ գը-  
րով ետ արձանացուցանել մշտնջենաւոր  
յարակայութեամբ . ապա հարկ է ոչ  
զանց առնել որպէս զմեծամեծօքն՝ սոյն-  
պէս և զիոքումբքն ըստ հասարակ գը-  
րեցելումն : Իսկ եթէ փոքունքն ոչ են  
ի պատճառս նուաստութեան, և ոչ մե-  
ծամեծքն ի պատճառս բարձրայօնու-  
թեան . և եթէ ոչ այն, և ոչ այս՝ ապա  
յերկուցն է մեզ հրաժարելի յախտիցն  
ասացելոց, և զմիջինն ընթանալ պողո-  
սայ անխռառ՝ և երկուասանական իշ-  
խանութեամբն միայն պատռել զՊետ-  
րոս. վասն զի այս իսկ են կամք երանե-  
լեացն դասու՝ որ յամենայն ուրէք հա-  
սարակութեան աշակերտեցան, ըստ այ-  
նըմ թէ և Վմենեքին դուք եզրարք էք ո  
և թէ և Հայր եղիցին և սոքա մի, որպէս ո

և մեք մի և մը ու և մեզ զնոյն ուսուցին,  
թէ «Յոր կոչեցարուքն՝ 'ի նմին կաց-  
ջիք ո» . և թէ «Յամենայնի որ է՝ 'ի ձեզ  
մի ինչ առաւել խորհելքան զարժանն,  
այլ խորհիլ 'ի զգ աստանալու . 'ի հաւա-  
տացեալսն իւրաքանչիւր ումեք 'ի քրիս-  
տոսէ Աստուծոյ մերմէ . որումընդ Հօր  
և ամենասուրբ Հոգւոյն փառք՝ իշխա-  
նութիւն և պատիւ , այժմ և միշտ  
և յաւիտեանս յաւիտենից . ամէն ,



## ՊԱՌՅԱԼ-Թ-ԷՒՐ

Յաղը անզանութեանութեան առ միմանս երկոտասան  
առցելցն . և հասարակ ընդունելոյ ՚ի քրիստոսէ զիւ-  
խութիւն . և թօքնագըւուի գորոյ իւրաքանչիւրցն ընդ-  
դէ Հռավմայեցւոցն պիրայութեանց՝ զորո առանձին  
առնուն ՚ի զեարոս :

‘ԵԱԽ’ հասարակ ասաց Քրիստոս ,  
‘Դուք էք աղ երկրի ո առ ՚ի բառնու-  
թնհամութիւնս նոցա :

Բ . “Եւ դուք էք լոյս աշխարհի ո ան-  
ձածկելի առ ՚ի փարատել զխաւարն ան-  
գիտութեան ՚ի բոլոր տանես :

Գ . “Եւ զերկոտասանսն կոչեցեալ առ  
թքն , ետ նոցա զօրութիւն և իշխանու-  
թիւն ՚ի վերայ ամենայն դիւաց և ցա-  
ւց . և առաքեաց քարողել զարքայու-  
թիւնն Աստուծոյ ո :

Դ . Եւ նոցա միայն ասէ Յիսուս և Ամէն  
առեմ ձեզ . զի դուք որք եկիք զկնի իմ ,  
՚ի միւսանգամ գալստեան իմում՝ յոր-  
ժամ նսոցի Որդի մարդոյ յաթոռ փա-  
ւց իւրոց , նստիք և դուք յերկոտա-  
սան աթոռս գատել զերկոտասան ազդ-  
չըն խրայէլի ո :

Տեսանեք՝ թէ որպէս ընդ իւր ցուցանէ անզանազան զնոսա առ միմեանս, որպէս տսա՞և անդ . և որոշէ զնոսա յայլոց զհետ ընթացելոցն , թէ և նոքա ասէ հարիւրապատիկ առնուն և ըդյաւիտենական կեանսն . բայց աթոռ ոչ խոստանայ վասն անհամեմատուեն նոցա-

ն . Եւ նոցա հաւասար ասէ և 'Ձեզ տուեալէ գիտել զխորհուրդ արքայութեան երկնից ո . զբնչ մեծագոյն իշխանութիւն ասիցէ ոք գոլ քան զայս . և զայս՝ որով նոքա պարծին մեծ գոլ, նա ամենեցուն ետ .

Զ . « Վմէն ասեմձեզ , զի զոր կապիցեք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս . և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս ո :

Է . « Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՞և ասէ , տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի . որպէս առաքեաց զիս Հայր՝ և ես առաքեմ զձեզ . գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս՝ մըկրտացէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . ուսուցէք նոցա զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ , և ես ընդ ձեզ եմ մինչեւ ՚ի կատարած աշխար-

վա. և այս բարձրագոյն և աններհակ  
իրայւթիւն :

ը. « Եւ եհան զեռսա ՚ի քեթանիտ  
և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց լզ-  
նաս ո : »

Տեսանէք զի ինքն ձեռնադրեաց լզ-  
նաս, և եցոյց զինքն միայն նոցա իշ-  
խող՝ և ոչ զՊետրոս կամ զայլ ոք :

թ. Եւ թէ՝ « Դուք եսն իցեմ, և դուք  
անդ իցէք, և ուր երթամն զիաիցէք .  
և զձանապարհն գիտիցէք ո : »

ժ. Եւ թէ՝ « Դուք տեսանէք զիս,  
զի ես կենդանի եմ, և դուք կենդանի  
լնելոց էք ո : »

ԺԱ. « Դիտասջիք զի ես ՚ի Հօր իմում,  
և դուք յիս՝ և ես ՚ի ձեզո. արդ որ զան-  
համեմատս զայս իշխանութիւն գիտու-  
թեան՝ բնակութեան արքայութեանն  
և նոցա հասարակ, զիա՞րդ ՚ի փոքունս  
առաւել կամ նուազ առնէր զեռսա :

ԺԲ. « Այլ զձեզ կոչեցի բարեկամո .  
չ զամենայն զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ՝  
ծանուցի ձեզ ո : Արդ եթէ զամենայն  
հասարակ ծանոյց երկուսանիցն, տապա-  
վերոսի միայն զի՞նչ ծանոյց . զի զան-  
անելին ոչ ումեք ծանուցանէ վասն յոյժ  
ինամացն :

ԺԴ. Եւ թէ՝ « Յս ընարեցի զձեզ՝ և  
եղի զձեզ, զի դուք պտղաբեր լինիցիք,  
և պտուղն ձեր կացցէ ո նմանապէս ա-  
ռէ կեալ քարոզութեան նոցա :

ԺԴ. Եւ թէ՝ « Հայր սուրբ սկահեա  
զնոսա յանուն քո որով ետուրն ինձ, զի  
եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք, և ՚ի  
վերայ բերէ, թէ քո բանդ ճշմարտու-  
թիւն է ո :

ԺԵ. « Որպէս զիս առաքեցեր յաշ-  
խարհ և ես առաքեցի զնոսա յաշխարհ, ո-  
մենեն ին աններհակ եցոյց զմի իշխա-  
նութիւնն, զի նախ միացոյց Հարբ՝ և  
ապա առաքեաց յաշխարհ, և կարկեաց  
զրերանս զանազանողացն :

ԺԶ. Եւ թէ՝ « Ճրդ գիտացին զի զա-  
մենայն ինչ զոր ետուրն ինձ՝ ետու նո-  
ցա . և նորա ընկալան, և ետու նոցա  
զրանն քո ո, կրկնեաց վասն առաւել  
հաստատութեան :

ԺԷ. « Եւ զայս իբրեւ տաաց, փչեաց  
՚ի նոսա . և տաէ, առէք Հոգի սուրբ .  
եթէ զուրուք թօղուցուք զմեզս՝ թո-  
ղեալ լիցի, և եթէ զուրուք ունիցիք,  
կալեալ լիցի ո, ըստ հաստրակ ընդու-  
նելոյն զհոդին՝ ետ և զիշխանութիւնն.  
միապէս պատուիրեաց զօրութիւն ըն-

բանել՝ ի բարձանց, միորակ և զհրեղէ-  
նըն ընկալան դւեղուսն, և կնքէ անլուծո-  
ւլի կոքով և անսպրդելի ՚ի ներհակաց  
վարհուրդ բանիս Հարր, զի տու. «Եւ  
ես զիառան զոր ետուր ինձ ետու նոցա-  
վ եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք.  
և ՚ի նոսա՝ և դու յիս, զի եղիցին կա-  
տաւ եալք ՚ի միու։ Արդ, զո՞ր փառա ետ  
վեպասի որբանքոյ այսր. զի այլն որբա-  
քոյ է ՚ի նման ութենէ Հօր և Որդւոյ  
միութենէն. և այս ոչ է բարեկամու-  
թիւն Պետրոսին այլ ներհակն նու ին. Մի  
զուցէ լսիցեմք ՚ի Պետրոսէ, թէ որ  
զեզրարս իմ նուաստացուցանէ՝ նուան-  
տացուցանէ և զիս. և զի այսուկ է ՚ի  
հաւասարսն, որպէս և Քրիստոս հրա-  
յայէ, թէ ՝Որ ուրանաց զՈրդին՝ և ըդ-  
հայր ուրացեալ էո. և Տէրն տու, թէ  
՝Որ զձեղ պատուէ՝ զիս պատուէ» ըշ-  
ձեղ տու՝ և ոչ զՊետրոս միայն. Նոյն-  
պէս և հակառակն սորին։

Արդ, որովհետեւ այսքան շուրջ ըդ-  
մեք մածեալ ունիսք զբազմութիւն  
վնայութեանցո, ՚ի բաց ընկեցուք զամ-  
բարաւանութիւն որ է մոյր խռավու-  
թեան, և զհաւասարութիւն տացուք  
նցու ըստ Քրիստոսի. և մի՛ անարդես.

ցուք, այլ սկասուեսցուք նոցայովք զՀայր և զՈՐԴի, և զսուրբ Հոգին, ուրում փառք յաւիտեանս:

Յուլովս ունեի գրել, այլ երկեայի տաղտկութեւէ լսողացն՝ զի առեցողք են բանի:

---

Նևան Պատրիարքաց զոր խոստացաք առանձին շարադրել զուտասիսանին՝ զոր առ Ամեաթն. յարեացի ՚ի սոյն և ընդդէմ հարծեացն Յունաց վասն սոցին և Ասոււց:

Ա, ՕՌ, յորժամ յողագս նախապատռութեան հայրապետին Հռովմայ ասէք Ամեաթն, այսպէս շարադրէք զյետինսն նորա. Եթէ ամենայն Պատրիարք և Կաթուղիկոս և արծովեսք (արք և պիտիոպոսք) և վէսք (Կայիսկոպոսք), պարտին հնազանդ լինել Պատրուն Հռովմայ. Ընդ որ յոյժ բերեալ իմ նախանձ, ասեմ. ով Հայր սուրբ, ոչ է ըստ օրինաց առաքելական Եկեղեցւոյ շարադրութիւնդ՝ զօր առնես, զի ըղՊատրիարքն զհետ բերես առաքելական աթոռակալին, և զկաթուղիկոսն Հայոց զկերի նորա դասես. Եւ ասա, զի՞նչ է Պատրիարքն, ոչ քաղաքի միոյ Եպիսկոպոս. իսկ Կաթուղիկոսն Հայոց՝ պետ ազ.

ի միոյ ողջայն։ Եւ ոչ ավուն իսկ Պատ-  
րիքին յայտ տռնէ զպատիւն իւր. զի  
ուի Հայրապետ։ և զի հայր է Եպիսկո-  
պոսն Ժողովրդեանն։ և ամենայն որ ե-  
պիսկոպոս ձեռնազրի՝ Հայրապետ կոչի-  
ու և ըստ այսմ զմի և զնոյն ունին պա-  
ռի Եպիսկոպոսն Առոյ և Աելեկիոյ և  
ոյք նմանք սոցին՝ զոր Անախոքայն և  
շնկերք իւր վասն զնոյնն ունելոյ ներ-  
քործութիւն։ և Եթէ այս ոչ ցուցցեն  
յԱռուածաշունչ գրոց, և հաւանիմք։

Իսկ Կաթուղիկոսն Հայոց յուլովս ու-  
նի այսպիսի մայրաքաղաքացիս ընդ իւ-  
րակիսանութեամբ, որով ի Լուսաւոր-  
չն մերսէ է սահմանեալ, զոր մի ըստ  
փոխէ ոչ կարեմբ թուել վասն երկա-  
րաթեան բանի։ Եւ երկրորդ՝ վասն ա-  
րաւաղելոյն սակս տարաբերութեան ա-  
ռաքելական Աթոռոյն Հայոց և թագա-  
ւորութեանն։ Բայց զտորսո զայսոսիկ որ  
աներհակ երեխն, ցուցցուք. թէ պէտ  
է ի մերօցս ոմանց քոր ընդ ոան թուի։

Առաջինն՝ Կաթուղիկոսն Ազուանից.  
Երկրորդն՝ Եպիսկոպոսն Աիւնեաց, զոր  
զինի սորտ նախապատուեցին Կաթու-  
ղիկոսին Հայոց։ Երրորդ՝ Եպիսկոպոսն  
Հայուասայ, որ ունի զտեղապահութիւն

Կամթուղիկոսին Վրաց, զտեսչութիւն  
բռլոր Գուգարաց, Զորբորդ՝ Եպիսկո-  
պոսն Ռշտունեաց և Մոկաց, որ նաորի ՚ի  
Տօսոյ գոււառի յԱղթամար կղ զի:

Իսկ Եթէ ասիցեն, թէ այդ այդպէս  
է, ընդէր ոչ ետուն հրաման ձեռնա-  
դրել իւրեանց Եպիսկոպոս այլացն՝ բայց  
Աղուանիցն: Վասն ընդ այլոց ազգաց  
իշխանութեամբ անկանելոյն վիճակաց  
նոցա, որոց ոչ ինչ է փոյթ վասն բարե-  
կարգութեան մերոց ազգիս և կարգաց  
Եկեղեցւոյ, զի մի իշխանափրութեան  
բարուք թիկունս տրարեալ զնոսա ա-  
պստամբեացին յառաքելական Աթոռոյն,  
և զրկեացին ՚ի շնորհաց նորին. ոյս է պատ-  
ճառն, և ոչ Եթէ ոչ ունիմբ տալ իշ-  
խանութիւն ձեռնազրութեան:

Պարձեալ ասեմ ցԼիկաթն. Կամթու-  
ղիկոսն անուն և էութիւն յորո՞մ վե-  
րայ կոչի սեպհական և ճշմարտապէս,  
Եթէ ոչ ՚ի Պետրոսի և Յովհաննու և  
Համակարգից նոցա տատանցն: զի նորա  
ընկալան հանուր հրամանն ՚ի Տեառնէ.  
աֆեացէք, ասէ, աշակերտեցէք զամե-  
նոյն հեթանոսս ։ Տեսանենս զհանրա-  
կանքն՝ թէ ոյք են, կամ յաւմմէ ընկա-  
լան զկոչումն աններհակ:

Եւ դարձեալ, ոչ թուղթքն նոցա  
յայտ առնեն զանուանս նոցա. զի կա-  
թուղթիկոսականք կոչին և ոչ այլով ան-  
ուամբ, որ ցուցանեն զնոստ կաթուղթ-  
կոսունս. և զայս ոչ կարէք ուրանալ.  
իսկ եթէ հակառակիք այսմ գոլ, հարկ  
ինի բաժանել զդիրս կաթուղթիելիցն ՚ի  
նոցանէ, և ցուցանել զդրողսն նոցա.  
յորոց անուն կոչին կաթուղթկայք. և  
զմին ի սոցանէ արտաքսել յԵկեղեցւոյ,  
կամ զզիրսն՝ կամ զԱռաքեալսն. զի  
հարկ է միունն ՚ի սոցանէ իմիւր գոլ.  
զի Եկեղեցի ոչ ընդունի զիմիւրութի,  
որոյ ճշմարտութիւնն է ընաանի. և  
կամ հաւանիլ անսուտ վկայիցս զօր բե-  
րաք, որ և եղեն իսկ առ Լիկաթն, և  
առարտեցաւ պատասխանիք նորտ.

Ընկալ զբնծայսդ իմ զսոկաւ զօր  
Զեզ նուիրեմ, արքայ ՀԵթում. վեհ  
եր խընդիրն քա քան զիս, և իմաստնոյ  
գործ նա այլում, զի զեղեցիկ գրեր քան  
զիս ըստ արժանեաց տեսոյ մտաց քում.  
լեր անարդամեծար առ իս, և նմանեա  
աստ Տեառն բում.

---

Ընդդեմ կարծեացն Յունաց :

**Յ**օյնք չորս ասեն Նախաթռու, ըդ  
կաստանդինուալոլիս, զԱնտիռք, և զԱ-  
ղէքսանդրիա և զԵրուսաղէմ, մինչ ան-  
նախանձք էին. և ըստ ամսուոցն ի չորս  
բաժանեն զբոլոր տիեզերս : Եւ առհման  
հաստանեն կաստանդինուալոլսի զԹրակիա,  
զՄակեդոնիան, զԵլլադա, և յԱսիոյ զա-  
րեմունայ Հիւսիսի լերինն Տօրոսի. ի  
Պամփիլեայ մինչեւ ցԵզեր և ցՀայս, և  
զաշխարհն Ապրմասացւոց :

**Ե**ւ Անտիռքաւ՝ զՀարաւու Տօրոսի ի  
Ապրացւոց մինչեւ ցպահակն Ծուրայ, որ  
հասանէ ՚ի Գալիլեայ Պաղեստինացւոց,  
և անդուստ ՚ի Պարսս, և անդր ևս յաշ-  
խարհն ձենաց :

**Ե**ւ Ազէքսանդրու՝ յԵզիպտոսէ սկր-  
ուեալ զբոլոր Լիրիա, մինչեւ ցանձանօթ  
ծով և երկիր . Եւ ամֆոռակալաց սոցա-  
սնուանս յօդեն կրկին պատռով. ըդ-  
կաստանդինուալոլսին աիւ զԵրական կաշեն  
Պատրիարք, և զԱնտիռքայն՝ աստուածա-  
քաղաքոցի և ամենայն տրեելեան, և  
զԱզէքսանդրուն՝ զաստղական : Եւ Ե-  
րուսոողէմի՞ որ օրէն էր քան զսմենայն  
նախապատռել, որպէս ողորմելով նմա-

հաղիւ տան վիճակ զՊաղեստին միայն .  
և զայս անագան ուրեմն քան զայլսն ,  
կամ ՚ի առջի Հռովմայ իրր կորեկոտ և  
կամ ամօթօյ է վասն մեծագործութեանց,  
և ոչ արժանաւորապէս :

Իսկ Հռովմայեցիք , թէ և Յոյնք տան  
զայս իշխանութիւն , ոչ առնուն յանձն  
զատութիւնն , այլ բայ Ճշմարտութեանն  
Առաքելական կոչեն զինքեանս ամժռ :

Եւ սոցա տան Յոյնք զոկի զբն շնոր-  
հարաշխութեան Եկեղեցւոյ . և ՚ի սո-  
ցանէ որբ ոչ առնուն՝ անկատար և ան-  
վաւեր ասեն , մոնաւ անդ զՀայք . և զայս  
այնքան հռչակեցին անհիմն և անհաստատ  
պատճառս դնելով , մինչ զի և զայլս ըդ-  
կեի ինքեանց ձգեցին , և յիմաստնոց  
ահզամ :

Եւ արդ , տեսցուք զատուդութիւն  
աւանդութեանս , նախ ՚ի բաց ընկեցեալ  
զհեռ և զու բարւոք նախանձն , որ ըդ-  
բարւոքն ոչ բարւոք առնէ . և ապա օ-  
տարին ոչ լսել ձայնի , և զհետ ընթա-  
նալ անմատրար պաճուճեալ առասպե-  
լոկան յօդուածոց . այլ Ճշմարտի հե-  
տեիլ Հովուին վարդապետութեան , որ  
ասէ՝ « Ո՞ի կոչեք զոք ուսուցիւ ձեզ ,  
զի մի է ձեր վարդապետու Քրիստոս .

և որ նովաւն խօսեք՝ տաէ, աշխիմ ոյլ  
ոք ոչ կարէ դնել, բան զեղեալն՝ որ է  
Յիսուս Քրիստոս։

Հարցանեմք նախ ընդ առաջինի ա-  
սացազն, եթէ յէք հիմուն վերաց ունիք  
դժինուածդդ զայդ, և կամ յումմէ ա-  
նին քաղաք քս ոյսորիկ զիշխանութիւնս  
զայս ծայրագոյն, Եթէ ՚ի Ք. յառակ ա-  
սէք, որ կարտզն է տալ, զայդ շշ կարէք  
ցուցաւել, զի տէրն զգալապէս ոչ հիմ-  
նեցոյց զեօստ, և ըստ հաւատաց անձամք  
ոչ եկն ՚ի սոստ, և ՚ի ձեռն հրավարակի  
ոչ պարզեցաց՝ զօր տաէքդ : Իսկ եթէ  
յեւարելոցն ասէք տուեալ՝ որոց Քրիս-  
տոս ետ զվեհագոյն պատիւն, ՚ի նոցա-  
նէ ոչ երեի աւելի ինչ տուեալ նոցա-  
պատիւ քան զայն զերաց ամենայնի :

Գիտեմ զի տաէք զայս վասն Անտիո-  
քու միայն, թէ անդ եկին Պետրոս և  
Պօլոս ըստ զրեցելումն, և հաստատե-  
ցին Եկեղեցի : Առ որս տանմք . Եթէ  
Նախապատուաթիւն է այս Անտիոքու,  
տպա այլքն որ ոչ ունին զայս՝ զօրս հա-  
ւասար սորտ պատուէք, բոլորովին են  
անպատիւք, և Նախապատուադոյն քան  
զսա Սամարիա, ուր իջեալ նախ ըաշ-  
խեցին զշողին սուրբ Պետրոս և Յով-

հանես . և ապա Կեսարիա Պաղեստինաց , ուր Պետրոս նախ Հաստատեաց աւագան , և ու զզեաց սեղան սուրբ , և յոյլ յոլով աեղիս , մինչև Հասին անդ :

Դարձեալ Հարցանեմք . եթէ քաղաքօքն Ճոխացուցանեք զատիճանսդ զայդ՝ զոր առաջին պատուէք . եթէ աստիճանօքն զքաղաքսն . զի եթէ քաղաքօքն ասէք . քաղաքքն ոչ ունին զինքեանց պատիւն՝ եթէ ոչ 'ի շինողացն յորոց անուն կոչին այժմ . և նոքօք ոչ է մարթ , զի անաստաւածք էին . Իսկ եթէ վասն բազմամբօխութեան մարդկանն . Եկեղեցի զայդ ոչ տռնու յանձն՝ լսելով 'ի Քրիստոսէ զհրամանն , թէ « Դոք չէք յաշխարհէ աստի , որպէս և ես չեմո . և զսպառնալիսն Տեառն՝ թէ « Օ խարդ կարէք հաւատալ՝ որ փառս 'ի մարդկանէ ինդրէք ո . զի յառ 'ի միոյն Աստուծոյ որոշի 'ի փառաց , ասէ՝ որ ոյսու Ճոխանայ , յորմէ հրաժարի յաւէտ աղաղակելով . թէ « Ինձ աշխարհ 'ի իսու ելեալէ այսու հետեւ , և ես աշխարհիս »

Արդ , եթէ աշտիճանօքն զքաղաքսն ասէք , ցուցէք թէ ում են աթոռք որով Ճոխանան . զի թէ յԱռաքելոցն աւէք որպէս ցուցաւն . նորա ոչ ինչ ա-

ւելի ներգործեցին ՚ի նոսա քան ՚ի բորսս . Եւ դիր և տեղի որբոց նոցանշաբացն ոչ են ՚ի քաղաքսդ յայդոսիկ , որ է ճշմարտապէս աթռու և պարծանք որոց ունինն :

Իսկ Եթէ Աւետարանչօքն ասէք ճոխ գոլ զաշտիճանսն և զքաղաքսն , հարցանեմք , ոյք են Աւետարանիչքն , թէ ոչ որ ընկալան զաւետիսն Հօր ըստ անսուտիստմանն Որդւց . և հրաման առին ուսուցանել զոր եկեալ յիշեցուսցէ նոցա . որ և երկուքն ՚ի նոցանէ են որք զրով տրձանացուցին , և այլ երկուքն ՚ի նոցանէ գոլ խոստավանին ընկալեալ զոր գրեցինն՝ ըստ Ղուկայ , « Եթէ աւանդեցին մեզ որք ՚ի սկզբանէ ականատեսք և սպասաւ որք եղեն Բանին » : Եւ յայսցանեաց որպէս ցուցան՝ ոչ ումեք դիր տապանի է , և ոչ աւելի ինչ ներգործեալ ՚ի քաղաքսն յայնս : Եւ դարձեալ երիցն որք գրեցին՝ յայտնի է տեղին ուր աւանդեցին զԱւետարանն , և ընկալան զկատարած կենացն , որոյ ոչ էք անգէտ՝ զոր անսուտմք միայն ջանայք պատուել զնոսա : Իսկ թերեւս անձամբ ասէք առնուել զիշխանութին զայն մեծ , զի այլ ոչ ուստեք երեի տուեալ . այլ

այնմ ոչ ներէ Աստուած Հայր՝ ասելով .  
“ Ենձամբ թագաւորեցին՝ և ոչ ինե .  
ընթանային՝ և ես ոչ առաքեի զնոսա .  
մարդարէանային՝ և ես ոչ խօսէի ՚ի նո .  
սա՞ . և Որդի , “ Յէկ ամենայն տունկ  
զոր ոչ տնկեաց Հայրն իմ երկնաւոր՝  
իոլեսցի ՞ :

“ Կարձեալ հարցանեմք . չորք ընդէր  
ասէք գոլ նախաթոռս , զի Քրիստոս եր .  
կոտասանս ընտրեաց՝ զի իցեն շուրջ ըշ .  
նովաւ , որպէս և գրեալն է . և որոց աստ  
նոցին և ՚ի հանդերձեալն խոստացաւ  
ընդ իւր լինել . “ Եստիք , ասէ , և գուք  
ընդ իս յերկոտասան աթոռս ՞ : Եմդ .  
ասացէք եթէ առ ս ունին զյառաջա .  
զիմութիւն՝ զի առաջին կոչէք զնոսա  
հարս . զի առ Քրիստոս ոչ կարէք ա .  
սել , զի նոքա ցուցան ՚ի նմանէ թէ  
ոյք և կամ քանիք իցեն . Եմդ , հարկ է  
այսմ սահմանողաց և ընդունողաց ու .  
սուցանել զՔրիստոս որպէս տգէտ՝ ան .  
պատշաճ գոլ զհիմնեցեալն առ ՚ի նմա .  
նէ , և արտաքսել զիսոստումն աթոռոցն  
՚ի գրեցելոցն նորա , և խափանել զեր .  
կոտասանսն , և դնել չորք ըստ իւր .  
եանց , որպէս և խափանեցին ինքեանք  
զՅովհաննուն և զբոլոր երկոտասանիցն .

և կամ զհակառակն ընդունել, զի զայն ոչ  
կարեն . զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել  
քան զեղեալն , և որ աւ ետարանէ քան  
զաւետարանեալն այլ՝ նզովեալ լիցի .

Այլ բատ ձեզ դարձեալ եղիցի չորք  
բատ Աւետարանչացն . Արդ , աւետարա-  
նիչքն ուստի ունին զկոչումն՝ քան թէ  
յաւետարանելցն զբանն կենաց , որպէս  
Առաքեալքն յառաքմանէն , և Մարդա-  
րէքն ՚ի նախատեսութենէն , յորմէ և  
իշխանութիւնն նոցա . Արդ , եթէ ա-  
ւետարանելն է ներգործութիւննոցա ,  
և ՚ի գործոյ անտի տայք նոցա ունել  
զիշխանութիւնդ զայդ ՚ի վերայ ափեզե-  
րաց , հարկ է իշխանութեանն զդործն  
հետեւցուցանել . և ոչ այլում ումեք  
տալ թոյլ ընթեռնուլ զԱւետարանն՝  
քան թէ նոցա միայն յորմէ ունին զայն-  
սղիսի իշխանութի . Աւ կամ որոց տայք  
զդործն՝ նոցին հաւասարել զաթոռա-  
կալոն , և սարկաւագարան կոչել զքա-  
զաքսն և ոչ պատրիարքարան . զի սար-  
կաւագացն տայք զաւետարանչութին ,  
որ Են յետին յաստիճան , և քահանայիցն  
անգամ ոչ արժանացուցանէք ընթեռ-  
նուլ որպէս զվերջին և զանպատիւ իր  
յեկեղեցի :

Ե. յլ Դ-Դ-Ի-Ն :

Դարձեալ, ընդէր կոշէք զեկեղեցիսդ  
զայդսսիկ կաթողիկէ . զի կաթողիկէն  
առաքելական է, և առաքելականն կա-  
թողիկէ . զի լծակիցք են և ոչ է հը-  
նար առանց միմեանց ասիլ, որպէս և  
թուղթքն կաթողիկեայց . Եւ ցուցաւ՝  
զի Առաքելոցն ոչ ոք գոյ ՚ի նոսա . և զի  
ոչ կոշէք զաթուակալս նոցա կաթողի-  
կոս . և զի հարկ է առանց ամենայն հա-  
կառակութեան կաթողիկոսս կոշէլ՝ յոր-  
մէ կաթողիկէ . և ոչ սրատրիաբքք՝ զի  
ոչ սրատրիաբքարան կոչի : Իսկ եթէ ոչ  
կոշէք կաթողիկոս , և ապա ոչ կաթո-  
ղիկէ . և թէ ոչ կաթողիկէ , և ոչ առա-  
քելական . ապա ընդէր խարիք , և խա-  
րէք զպարզամիտոն .

Դարձեալ, զի առէք ՚ի ձեռն չորից  
սրատրիաբքացն լինել զկատարումն խոր-  
հրդոյ Եկեղեցւոյ . և որք ոչ առնուն ՚ի  
նոցանէ՝ անկատար . Երդ , Եթէ ոյդովէս  
է, հարկ է ձեզ զքրիստոսի աւետարանն  
ստուեր ասել հանդերձելոց սրատրիաբ-  
քացն , և զքարոզութիւնն Առաքելոցն ,  
զքրիստոնէութիւնն . որ մինչ ՚ի սահ-  
մանումն սրատրիաբքացն ՚ի կոստանդի-

նուպօլիս ՚ի Յուստիանոսէ՝ կամ ով ոք  
էր, անկատար . և լրումն քրիստոսի և  
Աւետարանին՝ զպատրիարքսն . իսկ եթէ  
Առաքեալքն լի քարոզեցին, մինչ զի և  
ոչ հրեշտակաց կարօտանալ ըստ Պօղո-  
սի, ապա ընդունայն են պարծանքոց  
ձեր և նոքին իսկ ինքեանք .

Դարձեալ, յորմէ ունիք Յոյնք զիշ  
խանութիւնդ զայդ, զի ձեզ համարիք  
զպատիւ չորեցունցն . զի թէ յԱստու-  
ծոյ ասէք տուեալ զպատիւն զայն այնց  
քաղաքաց, ապա պատուեալն յԱստու-  
ծոյ հոգեօր է . իսկ հոգեօրն պատիւ  
ոչ յափշտակի մարմնապէս բռնութիք .  
զի գեռ ևս իւրաքանչիւր ազդացն որոց  
են գաւառքն՝ վերակոչի անունն, որոց  
յոյժ է պատշաճ, և ոչ ձեզ . իսկ եթէ  
հակառակիք ձեզ դու, բռնադատէք  
զանբռնադատելի տէրութիւնն : իսկ  
եթէ ոչ բռնադատի աստուածայինն  
ըստ բնութեանն, ապա թափուր էք  
յայնմ պատուոյ, և ընդունայն պարծիք :  
իսկ թէ խոստովանիք զՃշմարիտն, ե-  
թէ մերոյ ազգին միայն իշխեմք որոց  
անդ բնակեն, ապա ոչ ՚ի ձէնչ միայն  
անդ և ՚ի գաւառս նոցա պանդուխտ,  
այլ և յամենայն ազդաց, յորոց և աե-

սու չք հաւասար ձեզ . ապա զի՞ պարծիք  
համեմատք այլոց իրրե զառաւել ոք .

ԾԱՀՅԱՅԻՆ

Վասն կոստանդինու պօլսի առանձինն . որ է յա-  
տուկ Յանձնաց :

ԱՐԴ , վասն կոստանդինու պօլսի  
հարցանեմք , զի՞ այլք 'ի քաղաքացն զոր  
ասէք , հնագոյն թերեւս պատճառէք գոլ  
և յԱռաքելոցն կոչեցեալ ըստ հասա-  
րակաց կոչմանն . իսկ սա անագան ու-  
րեմն շինեցաւ յետ քարոզութեան Ա-  
ռաքելոցն յոլով Ժամանակաւ : Արդ ,  
ուստի ասէք ունել զծոյրագոյնութիւն  
զայն . որ ոչ միայն իշխու գաւառաց ,  
այլ Եփեսոսի՝ որ է աթոռ Յովհաննու  
սիրելի աշակերտին Տեսուն . թողից զայլ  
որն . և այնքան անարդէք . մինչ զի՞ յոր-  
ժամ յափշտակի 'ի ձէնջ կոստանդինու-  
պօլս , ոչ համարիք արժան անդ նստիլ  
եղիսկոպոսին կոստանդեայ քաղաքին :  
Եւ թէ ոչ էր ընդ իշխանութեամբ ձե-  
րով , մեղինչ ոչ գոյր ձեզ . իսկ Եթէ  
ընդ ձեռամբ ձերովէ , ապա արհամար-  
հանք է և ոչ անհատութիւն : Եւ զի  
նախ քան զայն Ժամանակս Եփեսոսի եւ

պիսկոպոսն ուներ զնախտգահութիւնն  
Ասիոյ բատ առաքելական պատուց Յով  
Հաննու , որպէս ունիմք 'ի պատմութեց  
եկեղեցւոյ . Ո՞ի յորժամ եղեւ գժոռու-  
թիւն ընդ Հռովմայեցիս և ընդ Ասիա-  
ցիս սակա սրբոյ Զատկին՝ զոր այլ և այլ  
աւուրս կատարէին , որ և Պոլիկրատէս  
Եպիսկոպոսն Եփեսոսի պարծէր 'ի Յով-  
Հաննէս և 'ի Փիլիպպոս , և ասէր ութ-  
երորդ զինքն յառաքելոյն . և զոյդ պայ-  
քարէր ընդ Բեկորի Եպիսկոպոսին  
Հռովմայ , որպէս և էր Հաւասար նորա .

Երդ , ո՞ փոխեաց զայս ստհման առ-  
տաւածադիր . թէ զկոստանդիանոս ա-  
սէք , Եւսեբի բազում ինչ պատմէ զնր-  
մանէ , և զոյդ ոչ յիշէ . և զի՞նչ վայել-  
էր առնել զայդ արդարոյն . Եւ թէ փո-  
խեաց , ոչ արդար՝ այլ անիրաւով , և ո՞  
ներէ նմա արդար գոլ . զոր քաւ լիցի  
'ի սրբոյն . Իսկ եթէ 'ի Յուստիանոսէ  
ասէք փոխեալ կամ յայլմէ ումերէ . ա-  
պա մեծ գոլ համարիք զնոսոտ քան ըլ-  
Յիսուս , որպէս զկարգեալսն 'ի նոցա-  
նէ՝ քան զառաքեալսն Քրիստոսի . ապա  
թէ ոչ զիարդ ձեռնադրէ Եպիսկոպոսն  
Կոստանդինու քաղաքին զաթոռակալն  
Յովհաննու առաքելոյն . զի առանց ա-

մենացն հակառակութեան նուազն ՚ի լու-  
ւէ անսոխ օրհնելի, ասէ Առաքեալն : Երդ,  
գուք ձեզէն ընտրեցէք զբաւն ՚ի նուա-  
զէն, և տեսէք՝ թէ յորոց վիճակի սակի  
էք. գուք ձեզէն տուք զիրաւն, զիարդ  
ոչ է յանդգնութիւն, ո՛ոք և իցէ, անի  
ըաւելն զԱւետարանիչն, և կարգել ըդ-  
լաւն ընդ նուազիւն . և ոչ պատկառել  
՚ի պատուական տեզւոյ հանդատեան նո-  
րա, և յԱւետարանէն զոր ասէք գրեալ  
աստուածաշօշափ ձեռաց նորա, որ իս-  
կապէս ցուցանեն զաեղին աթօռ նորա:  
Իսկ եթէ ՚ի ծերոցն ասէք աւանդեալ  
որպէս տեսին պատշաճ, գուցէ լուիցեն  
՚ի Տեառնէ, թէ և Ենարգեցին զաւան-  
թին իմ վասն ինքեանց աւանդութէ ..  
Եւ թէ ոչ է այսպէս, զիարդ ոչ իմա-  
նայք՝ զի Երկուասանիցն ասաց . թէ  
և ՚Իուք էք աղ Երկրի, և լոյս աշխար-  
հին . յորոց մի է և Յովհաննէս . որոյէս  
թէ և ՚ի նոցանէ համեմիմք նախ և լու-  
սաւորիմք յանհամութենէն և ՚ի խա-  
ւարէն : Իսկ գուք զիարդ ընդ կրուկն  
դարձուցանէք, և խաւարաւն ասէք լու-  
սաւորել զլոյսն : Իսկ եթէ լոյս և ոչ  
խաւար զոր ասեմք, յումմէ կաչեցաւ  
լոյս Կոստանդինուպօլսի աթօռն հակա-

ուակ այսոմ լուսոյ . զի ՚ի քրիստոսէ կո .  
շեցեալքն յայտնի են , և զի լոյս ոչ կա-  
րօտանայ լուսոյ . զի անմասն է խաւա-  
րի . ապա հարկ է միում ՚ի սոցանեւ սուտ  
դու . իսկ եթէ սոքա ճշմարիտ , ապա  
նոքա խաւար և ոչ լոյս :

Եւ գլխաւորելով զբանս հարցանեմք .  
ոչ դուք կուէք Տիաթիկ զբանն զայն յա-  
ւետարանն , զոր մերձ ՚ի շարչարանն  
զրեաց Տէր . Երդ , ասացէք , ում աւան-  
դեաց զիշխանութիւն Եկեղեցւոյ ՚ի Տի-  
աթիկն . ոչ ապաքէն Երկոտասանիցն՝ վը-  
կայութեամբ և հրամանաւ Հօր հաս-  
տատեալ , զոր և ինքեանք իսկ գիտա-  
ցին , զոր ետ նոցա ասելով առ Հայր .  
թէ և Երդ գիտացին թէ զամենայն ինչ  
զոր ետուր ինձ՝ ետու նոցա ։ և դար-  
ձեալ , թէ և Ես զիտառոն զոր ետուր ինձ՝  
ետու նոցա . և որպէս դու զիս առաքե-  
ցէր յաշխարհ , և ես առաքեցի զնոսա  
յաշխարհ ։ և թէ և Ոչ վասն նոցա մի-  
այն աղաջեմ , այլ և վասն ամենայն հա-  
ւատացելոց բանիւ նոցա յիս ։ Երդ .  
եթէ զամենայն ընկալան նոքա զիտու  
և զիշխանութիւն , և զմիջնորդութիւն  
մեր առ Արդի , իսկ գոքա զոր նախակար-  
գէք՝ յումմէ ընկալան զիշխանութիւն .

կամ առ ո՞յ միջնորդեն . զի եթէ ՚ի քրիստոսէ առէք և առ քրիստոս , ոչ կարեք , զի ոչ բաժանեալ է քրիստոս յանձն իւր . իսկ եթէ հակառակիք ՚ի նմանէ գոլ , առաջ բաժանեալ է . և բաժանելոյն ոչ կարէ կալ թաղաւորութիւնն , որպէս և հրամացէ ինքն . Այս է զԱռաքելոյն տսել առ ձեզ , թէ և Օմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անորդել . և ոչ այլ հրաման ՚ի վերաց այնք տալ ։ Վրդ , զկտակն որ ՚ի քրիստոսէ և ՚ի Հօրէ հաստատեալ յերկոտասանն , ՚ի կոստանդինուպոլիս՝ որ յետ երկու հարիւր ու թսուն և մի ամաց շինեցաւ , և այն անագան , սահմանադիրքն զիարդ կարացին խախտել , զի խախտեցին ըշնոցա տթոռն . զի եթէ խախտելի է , ոչ է կտակ . իսկ եթէ կտակ է , ապա անշարժ է ըստ Պօղոսի . մանաւանդ զի Աստուծով է , զի ոչ ոք կարէ ընդդէմ տսել նորա կամաց :

Վրդ , ով եզրարք , ոչ եթէ այսու արտաքսեմք զձեզ յերկոտասանիցն պատուոյ , այլ զձեզ վերստին հաստատեմք , թէ ընդունիք շնորհք Աստուծոյ Ոիովն՝ զի զօրացեալ լինիք յեզրօրէ ըստ գրոց , և միւսովն՝ զի մեք անդա-

սասպարտ լիցուք յեզրայրական սիրոյն  
պարտուց :

---

Վասն հայոց եկեղեցւոյն՝ զի հաւասար է Հռովմայ եկե-  
ղեցւոն և Եփեսոսի : որ ոյժմ անպատճի ՚ի Յունաց  
վասն համապատճեմեան Առաքելոցն մըրոց :

Եթ արդ, եթէ ասեն Յոյնք և Հռով-  
մայեցիք՝ որպէս յառաջագոյն և այժմ՝  
ցհայս, թէ դուք որովլ պարծիք մայ-  
րաբաղաբաւ, կամ ո՞ւ եկն առ ձեզ յեր-  
կոտասանիցն, զի ասէք զձեզ հաւասար  
մեզ. զի որ եկն առ ձեզ յառաքելոցն  
թագէսոս՝ յեօթանասնիցն և ոչ յերկո-  
տասանիցն է, և դուք անադան ուրեմն  
դարձայք ՚ի Ք.րիստոս, և ոչ զհետ մեր :

Եռ որս ասասցուք նախ, թէ մեք ոչ  
պարծիմք մայրաբաղաբաւ, զի աշխարհա-  
կան է, վասն որոյ ասէ Տէր՝ թէ ՚Իուք  
չէք յաշխարհէ, որպէս և ես չեմ ։  
և եթէ՝ ՚Իմ արքայութիւն չէ յայսմ  
աշխարհի ։ և մեք յանաշխարհիկն  
պարծիմք : Ե.յլ և զոր դոյրն՝ քանդեցին  
թշնամիք խաշին Ք.րիստոսի արտասահ-  
մանեալ զմեզ . կատարեալ ՚ի մեզ բա-  
նին Տեառն՝ եթէ և Յաշխարհի աստ

զնեղութիւն ունիցիք . այլ քաջալերացարուք՝ զի ևս յաղթեցի աշխարհի ո . և մեր խրախուսեալք ՚ի նա՝ պարծիմք ևս ըստ գօղասի ՚ի նեղութիւնս մեր որ վասն նորա :

Եւ զոր ասէքդ՝ զթաղէսս յեօթանասնիցն գոլ . զոյդ ոչ յառաքելական մատեանց ասէք՝ ուստի տրամաբանութիւնս մեր , այլ ՚ի վիպասան պատմադրաց . իսկ յաւետարանին Մատթէսս և Մարկոս յերկոտասանիցն զնա թուեն , և անուանն փոփոխմամբ ևս զնա պատուեալ Տեառն որպէս զՊետրոս և զորդիսն Որոտման . Իսկ թէ ասէք՝ թէ շուկաս ոչ յիշէ զնա ընդ նոսա . ոչ է զարմանք՝ թէ այլով անուտմբ նշանակէ զնա . զի նոքա ոչ եթէ հակառակք են , զի եկեղեցիք են Աստուծոյ . իսկ եթէ դուք հակառակիք , ասկա երկուցն վրկացութիւն հաւատարիմէ քան զմիոյն՝ ըստ հրամանի Տեառն :



Իսկ թէ պէտ և ըստ կարծեաց ձերոց ասեմք զնա յեօթանասնիցն գոլ , սակայն ոչ նուազիմք ՚ի ձէնջ , զի ահա Բարթուղիմէսս և Յուդայ Յակոբեան և Սիմոն նախանձայոց վիճակեցան ազդիս Հոյոց : Իսկ եթէ ասիցէք , թէ նո-

քա այլոց աղդաց և ոչ ձեզ վիճակեցնին . ցուցեք թէ աւմ , և հաւանիմք ձեզ . զի ՚ի քրիստոսէ որ տուողն է իշխանութեան՝ ոչ կարեք . զի նա բացարձակ հրամայեաց նոցա . թէ « Վասցէք աշակերտեցէք զամենայն հեթանոսան անզանազան . զի ուր կատարեցին մահուամբ , նմին աղդի եղեցի իշխանութիւն նոցա առանց ամենայն հակառակութեանուն :

Եւ դարձեալ , թէպէտ և տամբը ըստ ձեզ՝ ըստ աղդացն և զառաքեալն ըաժանեալ . ոյլ նորա օրինակ ինքեանց ունելով զքրիստոս , և խրատեալք ՚ի նըմանէ՝ թէ « Յինէն ուսարուքն , և ուսւցանէր ասելով . « Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոշխարս կորուսեալս տանն իսրայէլին . և Յովհաննէս՝ թէ « Յիւրան եկն , և իւրքն զետ ոչ ընկալոն . իսկ որք ընկալոնն զետ , ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինելս . նոյնպէս և աշակերտքն նորա յիւրեանցն դնացին վիճակ . և ոչ ընկալեալ զնոսադարձան ՚ի նոցանէ ըստ հրամանի Տեսորին , թօթափեալ զփոշի ոտիցն ՚ի նոսա՝ ՚ի յանդիմանութիւն նոցա . Իսկ առ որս զնացեալ և ընկալեալ եղեն , և տուն

նոցա զիշխանութիւննե՞ զօր առին ՚ի  
Տեսանէ , ըստ նորին հրամանի՝ թէ որ  
ովէս և ՚Ձբի առեք՝ և ձրի առք ո : Եւ  
օրինակ մեզ Պետրոս . զի նա յատուկ  
էր որոշեալ վիճակ ՚ի Տեսանէ թլիու-  
տութիւնն . և զի ՚ի Հռովմայեցւոցն ըե-  
կալու զյաղթանակ մարտին , դարձեալ  
՚ի նոսա . իսկ այժմ Հռովմայեցւոց ա-  
ռաքեալ է՝ և կոչի . նոյնպէս և քար-  
թուղիմեսս և այլքն զօր ասացաք՝ մեզ  
են , և ասին . Իսկ եթէ նոքա՝ ոչ մեզ , և  
ոչ Պետրոս՝ նոցա . ապա եթէ Պետրոս  
նոցա , քարթուղիմեսս և այլքն մեզ  
առանց հակառակութեան :

Իսկ զօր առեք՝ անագան դառնալ մեզ ,  
և այդ յիրաւի , զի ՚ի մեասաներորդ  
Ժամու . և այս ոչ ՚ի հեզզութենէ մերմէ .  
այլ ՚ի կոչողին ձայնէ է առ վերջնառեալք .  
և այս յայտ ՚ի տանուակառնէն՝ զօր  
արարն . զի յորժամ յայց ել մեզ ՚ի մե-  
տասաներորդ Ժամու , և կոչեաց զմեզ  
ըստ սկզբուն թեան իւրում յայգին իւր  
՚ի ձեռն առաքելաշնորհ տանն Աստուծոյ  
սրբոցն Գրիգորի Պարթեին , հաւասա-  
րեաց զյօժարութիւնն մեր ընդ քրտանց  
առաջնոցն ՚ի տուրս վարձին , զօր յա-  
շաղեալ առաջնոցն :





A —  
7549

